



association pour la prévention de la torture
 asociación para la prevención de la tortura
 association for the prevention of torture



ԼԳՏԻ ԱՆՁԻՆՔ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԿԱՅՐԵՐՈՒՄ. Կանխարգելիչ մշտադիտարկման հիմունքները



ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԿԱՅՐԵՐՈՒՄ ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՁԵՒԱՐԿ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ

ՆԵՐԱՌՈՒՄ Է 2015թ. ԿԵՐԱՆԱՅՎԱԾ «ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ
 ԿԱՐԿԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ ՆԿԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ»
 (ՆԵՍՈՆ ՄԱՆԴԵԼԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ)

**ԼԳՔՏԻ ԱՆՁԻՆՔ ԱՉԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ.
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

«Միջազգային բանտային բարեփոխում» կազմակերպությունը (Penal reform international) և խոշտանգումների կանխարգելման ասոցիացիան (Association for the Prevention of Torture/ APT) իրենց երախտագիտությունն են հայտնում ժան-Սեբաստիան Բլանին սույն փաստաթղթի պատրաստման համար:

Սույն ձեռնարկը ստեղծվել է «Միջազգային բանտային բարեփոխում» կազմակերպության՝ «ԱՊՉ 9 երկրներում խոշտանգումների դեմ պայքարում ինստիտուտների ամրապնդումը և քաղաքացիական հասարակության ներուժի կառուցումը» ծրագրի շրջանակներում՝ խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի հետ համատեղ՝ «Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքի» (European Instrument for Democracy and Human Rights/ EIDHR) ֆինանսական աջակցությամբ:

Փաստաթղթի վերահրատարակումը և թարմացումը, որը ներառում է 2015 թվականին վերանայված «Բանտարկյալների հետ վարվեցողության ՄԱԿ-ի Նվազագույն ստանդարտ կանոնները» (Նելսոն Մանդելայի կանոններ), հնարավոր է դարձել Մեծ Բրիտանիայի կառավարության ֆինանսական աջակցության շնորհիվ:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է բացառապես «Միջազգային բանտային բարեփոխում» կազմակերպությունը, և այն ոչ մի պարագայում չի կարող համարվել Եվրոպական Միության կամ Մեծ Բրիտանիայի կառավարության դիրքորոշման արտահայտություն:

Սույն փաստաթուղթը թույլատրվում է ազատորեն ուսումնասիրել, համառոտագրել, վերահրատարակել և թարգմանել հատվածաբար կամ ամբողջությամբ՝ երաշխավորությամբ, որ այն չի օգտագործվի վաճառքի կամ առևտրային նպատակներ հետապնդող այլ գործունեության համատեքստում: Փաստաթղթում կատարված ցանկացած փոփոխություն պետք է հաստատվի «Միջազգային բանտային բարեփոխում» կազմակերպության կողմից: Պատշաճ հղումը «Միջազգային բանտային բարեփոխում» կազմակերպությանը և սույն փաստաթղթին պարտադիր է: Հարցերն ուղարկել publications@penalreform.org էլ. փոստի հասցեին:

Զևավորումը՝ Չոն Բիշոփի:

© Penal Reform International 2015.

Penal Reform International
60 – 62 Commercial Street
London E1 6LT United Kingdom
Հեռախոս: +44 (0) 20 7247 65 15
Email: publications@penalreform.org

www.penalreform.org
Association for the Prevention of Torture
PO Box 137
CH-1211 Geneva 19, Switzerland
Հեռախոս: +41 (22) 919 21 70
Email: apt@apt.ch
www.apt.ch

«Միջազգային բանտային բարեփոխում» (ՄԲԲ) կազմակերպությունն անկախ հասարակական կազմակերպություն է, որը մշակում է քրեական արդարադատության խնդիրներին արդար, արդյունավետ և համարժեք արձագանքելու մեխանիզմներ և նպաստում է դրանց ներդրմանը:

Մենք խթանում ենք ազատագրված հետ չկապված պատժամիջոցների կիրառումը, որոնք նպաստում են դատապարտյալների վերաինտեգրմանը, և պաշտպանում ենք ազատագրվածների՝ արդար և մարդկային վերաբերմունքի արժանանալու իրավունքը: Մենք պայքարում ենք խոշտանգումների կանխարգելման և մահապատժի վերացման համար, ինչպես նաև աշխատում ենք արդարադատության համակարգում երեխաների ու կանանց նկատմամբ արդար և համապատասխան միջամտությունն ապահովելու նպատակով:

Ներկայումս մենք ծրագրեր ենք իրականացնում Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում, ինչպես նաև աշխատում ենք Հարավային Ասիայի մեր գործընկերների հետ:

Մեր ամենամյա էլեկտրոնային տեղեկագիրը ստանալու համար գրանցվեք հետևյալ հղմամբ՝ www.penalreform.org/keep-informed.

ԲՈՎԱՆԱԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	6
1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ	6
2. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	7
ՈՒՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ	9
1. ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿԱԼԱՆՔԸ	9
2. ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	10
3. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ	11
4. ԱՆՁՆԱԿԱՆ ՉՆՆՈՒՄ	11
5. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	13
6. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԸ	13
7. ՄԵԿՈՒՄԱՑՈՒՄ ՈՒ ՄԵՆԱԽՈՒԳԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ	14
8. ԽՏՐԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ	16
ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՆԵԼ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ	18
1. ԻՐԱԿԱԿԱՆ ՀԵՆՔԸ	18
2. ԿԱԶՄԸ	18
3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ	18
4. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ	19
5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ	19
ՀՂՈՒՄՆԵՐ	21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2013 թվականի ապրիլին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար Բան Կի Մունը հիշարժան ելույթով հանդես եկավ Օսլոյում կայացած մարդու իրավունքներին, սեռական կողմնորոշմանն ու գենդերային ինքնությանը նվիրված կոնֆերանսին: Նա խստորեն դատապարտեց սեռական փոքրամասնությունների դեմ բոլոր հարձակումները և կոչ արեց պետություններին ու ժողովուրդներին փոխել այդ խմբի հանդեպ կարծրատիպային վերաբերմունքը:

«Մեզ բոլորիս պետք է վրդվեցնի, երբ մարդիկ խտրական վերաբերմունքի, հարձակումների և նույնիսկ սպանության գոհ են դառնում պարզապես լեսբոսի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդեր լինելու պատճառով: Մենք չպետք է լռենք, երբ մարդիկ ձերբակալվում են և ազատագրվում սիրելու կամ տարբերվող արտաքին ունենալու համար: Սա մեր ժամանակների խոշորագույն, անտեսված մարտահրավերներից մեկն է մարդու իրավունքների ոլորտում: Մենք պետք է ուղղենք այս սխալը: [...] Ոմանք կընդդիմանան փոփոխություններին և, հղում անելով մշակույթին, ավանդույթներին կամ կրոնին, կփորձեն պահպանել ստատուս-քվոն: Նման փաստարկներ օգտագործվում էին ստրկությունը, մանկահասակների ամուսնությունը, սեռական բռնությունն ընտանիքում ու կանանց թլպատումն արդարացնելու համար: Ես հարգում եմ մշակույթը, ավանդույթները և կրոնը... սակայն դրանք երբեք չեն կարող արդարացնել հիմնարար իրավունքների ժխտումը:»¹

Չնայած սեռական փոքրամասնություններին ցուցաբերվող ուժեղ աջակցությանն ամբողջ աշխարհում՝ Գլխավոր քարտուղարի խոսքերը ցույց են տալիս, որ կյանքի տարբեր ոլորտներում ԼԳԲՏԻ² անձինք պատմականորեն բախվել և բախվում են խտրական վերաբերմունքի և բռնության: Մշակույթը, ավանդույթներն ու կրոնը նշանակալից թվով երկրներում շարունակում են օգտագործվել մարդու հիմնարար իրավունքների ժխտումն արդարացնելու համար: Որոշ պետությունների օրենսդրությունները նախատեսում են ԼԳԲՏԻ անձանց հատուկ պաշտպանություն խտրականությունից և բռնությունից, ինչպես նաև այլ քաղաքացիների հետ հավասար իրավունքներ, սակայն մյուսները ոչ մի առանձնահատուկ պաշտպանություն չեն նախատեսում, անգամ ավելին՝ հետերոնորմատիվությանը չհամապատասխանող վարքագիծը քրեականացվում է:³

Միջազգային մակարդակում սեռական փոքրամասնությունների պաշտպանությանը վերաբերող կոնվենցիաները դեռևս ձախողում են, և ԼԳԲՏԻ անձանց կարգավիճակի վերաբերյալ չկա համապարփակ կոնսենսուս: Այդուհանդերձ, Միացյալ ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող որոշ գործիքներ, այդ թվում՝ հիմնական պայմանագրային մարմիններն ու հատուկ ընթացակարգերը, սահմանում են սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունից պաշտպանություն ապահովելու պետությունների պարտավորությունը: Բացի այդ, Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը հրապարակել է զեկույց՝ նվիրված սեռական փոքրամասնությունների դեմ ուղղված խտրական օրենքների, պրակտիկաների և բռնության խնդրին:⁴

Մարդու իրավունքների խորհրդի 2013 թվականի հունիսի 10-ի համատեղ հայտարարության մեջ «Ա» ստատուսով մարդու իրավունքների պաշտպանության ազգային 29 ինստիտուտներ կոչ են արել միջոցներ ձեռնարկել՝ կանխելու ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ բռնությունները և ստեղծել «համապատասխան մեխանիզմներ՝ ուսումնասիրելու, փաստագրելու և Մարդու իրավունքների խորհրդին զեկուցելու սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության հիմքով և ինտերսեքս անձանց մարդու իրավունքների խախտումների, խոչընդոտների և մարտահրավերների վերաբերյալ»:⁵

Սեռական փոքրամասնություններին պաշտպանող մարդու իրավունքների սկզբունքները հռչակվել են 2006 թվականի նոյեմբերին մի խումբ իրավապաշտպանների⁶ կողմից՝ «Սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության համատեքստում մարդու իրավունքների մասին միջազգային իրավական նորմերի կիրառման Չոկյակարտյան սկզբունքները»⁷ (Չոկյակարտյան սկզբունքներ):

ԼԳԲՏԻ անձինք կամ նրանք, ովքեր ընկալվում են որպես այդպիսին, առանձնակիորեն խոցելի են ազատագրկման պայմաններում՝ մշտապես գտնվելով իրենց նկատմամբ իրավախախտումների ու չարաշահումների ռիսկի գոտում, այդ թվում՝ մյուս ազատությունից զրկված անձանց կողմից: Խոչտանգումների կանխարգելման հարցերով հատուկ զեկուցողը շատ հստակ բնութագրել է սեռական փոքրամասնությունների վիճակն ազատագրկման վայրերում:⁸

«[Նրանք] հաճախ համարվում են բանտարկյալների ենթադաս, պահվում են ավելի վատ պայմաններում, քան մյուս բանտարկյալները: Հատուկ զեկուցողին տեղեկություններ են տրամադրվել առ այն, որ սեռական փոքրամասնություններն ազատագրվման վայրերում ենթարկվում են լուրջ բռնությունների՝ հիմնականում սեռական ոտնձգությունների և բռնաբարության, բանտակիցների, իսկ երբեմն նաև հիմնարկի ծառայողների կողմից: Հայտնի է նաև, որ վերջիններս քայլեր չեն ձեռնարկում կանխելու համար բանտակիցների կողմից բռնությունը, ավելին՝ նրանք նույնիսկ խրախուսում են նման վարքը՝ այդ նպատակով բացահայտելով սեռական փոքրամասնություն հանդիսացող անձանց անունները խցակիցներին: Ըստ տեղեկությունների՝ հիմնարկի ծառայողները սպառնում են սեռական փոքրամասնություն հանդիսացող անձանց ընդհանուր բանտախուց տեղափոխելով, որտեղ նրանք մեծ հավանականությամբ սեռական բռնության են ենթարկվելու: Նույն տեղեկությունների համաձայն, հատկապես տրանսսեքսուալ և տրանսգենդեր անձինք և մասնավորապես իրենց սեռական պատկանելիությունն արականից իգականի փոխած ազատությունից զրկվածները, տղամարդկանց համար նախատեսված քրեակատարողական հիմնարկներում, տեղաբաշխվելով ընդհանուր խցերում, հայտնվում են խցակիցների և բանտի աշխատակիցների կողմից ֆիզիկական և սեռական բռնության լուրջ սպառնալիքի ներքո»:

Մշտադիտարկում իրականացնող մարմինները, այդ թվում կանխարգելման ազգային մեխանիզմները, ազատագրվման վայրեր պարբերաբար այցելությունների և պետական մարմիններին հաջորդիվ զեկույցներ ներկայացնելու միջոցով, կարող են առանցքային դերակատարություն ունենալ ազատագրվման վայրերում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության և այլ ազատագրված անձանց հետ հավասար հիմունքներով վերաբերմունքի երաշխավորման գործում:

Սակայն մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է խստով պահպանեն «մի վնասիր» սկզբունքը և չբացահայտեն ԼԳԲՏԻ անձանց ինքնությունը հիմնարկի աշխատակիցներին կամ մյուս ազատությունից զրկվածներին՝ ավելի մեծացնելով դաժան վերաբերմունքի ու հետապնդումների վտանգը:

«Պետությունները [...] պետք է ապահովեն բոլոր ազատագրվման վայրերի անկախ վերահսկողությունը՝ պատշաճ իրավասություն և հազեցվածություն ունեցող մարմինների կողմից, հայտնաբերելու ձերբակալության և կալանավորման այն դեպքերը, որոնք կարող են պայմանավորված լինել անձի սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ»:

**(Ձույակարտյան սկզբունք 7 (Դ),
Կամայականորեն ազատությունից չզրկվելու
իրավունք)**

Մշտադիտարկում իրականացնող մարմինները, համապատասխան ռազմավարություն մշակելիս, պետք է հաշվի առնեն տվյալ երկրի նաև ազատությունից զրկվելու վայրի յուրահատկություններն այդ թվում՝ տեղին է, արդյոք, այցի ընթացքում ԼԳԲՏԻ անձանց հետ անմիջական հանդիպումը, թե՛ ոչ:

Այս փաստաթղթի նպատակն է ուրվագծել հիմնական ռիսկային գործոններն ու իրավիճակները, որոնց ենթակա են ԼԳԲՏԻ անձինք՝ հայտնվելով քրեական արդարադատության համակարգում՝ ազատությունից զրկված անձի կարգավիճակում, ինչպես նաև ներկայացնել գործողությունների հնարավոր ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ, որոնք կարող են կիրառվել մշտադիտարկում իրականացնող մարմինների կողմից:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Շատ երկրներում դեռևս գործում են ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրական օրենքներ: Այդպիսի խտրականությունը կարող է դրսևորվել սկսած նույնասեռականների համար սեռական համաձայնության ավելի բարձր տարիքի սահմանմամբ, քան հետերոսեքսուալների համար¹¹, վերջացրած խտրական և նվաստացուցիչ բժշկական հետազոտություններով¹² կամ բարոյականության երկակի նորմերով: Այն կարող է դրսևորվել նաև նույնասեռական հարաբերությունները կամ ինքնին սեռական կողմնորոշումը քրեականացնելու միջոցով, ինչը որոշ երկրներում անգամ պատժվում է մահապատժով:¹³

Սույն փաստաթուղթը չի ներկայացնում նույնասեռականության քրեականացմամբ պայմանավորված մարդու իրավունքների իրացման խնդիրները, այլ թիրախավորում է ազատությունից զրկելու վայրերում առկա խտրականության դրսևորումներն ու չարաշահումները:

1. ՍԱՀՅԱԿԱՆՈՒՄՆԵՐԸ

ԼԳԲՏԻ՝ հապավում, որն օգտագործվում է լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և ինտերսեքս անձանց համար: Ակտիվիստները, հասարակական կազմակերպությունները, սոցիոլոգները, մեդիան և այլոք օգտագործում են նաև այլ հապավումներ, այդ թվում ԼԳԲ, ԼԳԲՏ կամ ԼԳԲՏԶ (Զ՝ քվիր), որոնք արտահայտում են տարբեր ինքնություններ, իրողություններ, պահանջներ ու խնդիրներ: Շատ մարդիկ, ում դասում են որպես ԼԳԲՏԻ, իրենք իրենց չեն նույնականացնում այդ հապավման, փիլիսոփայության և խորհրդանիշների հետ: Ոմանք կարող են այն շփոթեցնող համարել կամ սեռական կողմնորոշումը կամայականորեն որպես գենդերային ինքնություն մեկնաբանող: Որոշ մշակույթներում ոչ ոք իրեն լեսբուհի կամ գեյ չի համարում հասարակական արմատացած կարծրատիպերի պատճառով, այնուամենայնիվ, ոմանք հնարավոր է՝ նույնասեռ հարաբերությունների փորձ ունենան: Այդ իսկ պատճառով ներդրվել են «տղամարդ, ով սեռական հարաբերություններ ունի տղամարդու հետ» և «կին, ով սեռական հարաբերություններ ունի կնոջ հետ» ձևակերպումները՝ բնութագրելու այն անձանց, ովքեր իրենց չեն համարում գեյ կամ լեսբուհի: Այդուհանդերձ, հաշվի առնելով խնդրի բարդությունը և շահագրգիռ խմբերի ու անձանց լայն շրջանակը՝ այս փաստաթղթում օգտագործվելու է ԼԳԲՏԻ եզրույթը:

«Լեսբուհի», «գեյ» և «բիսեքսուալ» եզրույթները կարելի է մեկնաբանել սեռական կողմնորոշման համատեքստում: Ըստ Ջոկյակարտյան սկզբունքների ներածության՝ «սեռական կողմնորոշումը մեկնաբանվում է որպես յուրաքանչյուր անձի ունակություն՝ ունենալու խորը հուզական, զգացմունքային կամ սեռական ձգողություն այլ սեռի, նույն սեռի կամ մի քանի սեռերի անձանց նկատմամբ, ինչպես նաև ունենալու այդ անձանց հետ ինտիմ և սեռական հարաբերություններ»:¹⁴

«Տրանսգենդեր» եզրույթը կարող է դիտարկվել գենդերային ինքնության համատեքստում: Ջոկյակարտյան սկզբունքների համաձայն՝ գենդերային ինքնությունը «յուրաքանչյուր անձի կողմից իր իսկ գենդերի ընկալումն ու անհատական փորձը, որը կարող է համընկնել կամ չհամընկնել ծնունդով սեռի հետ՝ ներառյալ սեփական մարմնի անհատական ընկալումը, ազատ կամարտահայտման պայմաններում կարող է ուղեկցվել արտաքին տեսքի կամ ֆիզիոլոգիական ֆունկցիաների բժշկական, վիրահատական կամ այլ միջոցներով փոփոխությամբ, ինչպես նաև այլ դրսևորումները, ինչպիսիք են՝ հագուստը, խոսքը և շարժումները»:¹⁵

Վերջապես «ինտերսեքս» եզրույթը օգտագործվում է նկարագրելու համար սեռական և վերարտադրողական բնութագրիչները, որոնք չեն տեղավորվում «կին» կամ «տղամարդ» բնորոշ սահմանումների մեջ:

Տրանսգենդեր և ինտերսեքս անձանց խնդիրները տարբերվում են գեյ և լեսբի անձանց, ինչպես նաև միմյանց խնդիրներից: Տրանսգենդեր անձանց հիմնական մարտահրավերը պայմանավորված է խտրականության հետ այն հիմքով, որ նրանց կողմից իրենց սեռի ընկալումը չի համապատասխանում նրանց կենսաբանական սեռին, մասնավորապես նրանք բախվում են բժշկական օգնության հասանելիության խնդրին, ինչպիսին է, օրինակ, սեռափոխության վիրահատությունը:

Մյուս կողմից՝ ինտերսեքս անձանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունների հիմնական պահանջն է արգելել խեղանդամել երեխաներին՝ երեխայի կենսաբանական սեռը սոցիալական և կոսմետիկ նկատառումներով վերջնական ձևակերպելու նպատակով:¹⁶ Այսպիսով, այս երկու խմբերի իրողությունները, մարտահրավերներն ու պահանջները կարող են դիտարկվել որպես լիովին տարբերվող: Չնայած դիտարկվող խմբերի

միջև էական տարբերություններին՝ փորձը ցույց է տալիս, որ ԼԳԲՏԻ հապավմամբ բնութագրվող կամ հապավման որևէ դասին պատկանող անձինք մի խումբ են, որն ազատությունից զրկման վայրերում գտնվում է առավել խոցելի վիճակում: Նրանք իրենց ձերբակալման իսկ պահից մինչև ազատումը կանգնած են մարդու իրավունքների խախտման և չարաշահումների վտանգի առջև:

Աշխարհում լեսբի, գեյ և բիսեքսուալ ազատությունից զրկվածների թիվը մեծ չէ, իսկ տրանսսեքսուալներն էլ ավելի քիչ են:¹⁷ Հավանաբար այդ պատճառով այս խմբին, ազատությունից զրկվելիս, պատշաճ չի ապահովվում նրանց պաշտպանությունը և չեն գնահատվում կարիքները: Ինչպես հայտարարել է Խոշտանգումների կանխարգելման հարցերով հատուկ զեկուցողը. «Թեև հատուկ զեկուցողը չի տիրապետում համապատասխան վիճակագրական տվյալների, ակնհայտ է, որ սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչներն անհամաչափորեն ենթարկվում են խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի, քանի որ չեն արդարացնում սեռի վերաբերյալ ընդունված ընկալումները»:¹⁸

2. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպես արդեն նշվել է, միջազգային իրավունքն անմիջականորեն չի ապահովում ԼԳԲՏԻ անձանց անվտանգությունը դաժան վերաբերմունքից և բռնությունից, էլ չսասած՝ ազատությունից զրկելիս նրանց հետ վարվեցողության տրամաբան մասին: Այդուհանդերձ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5-րդ, և Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ԶԶԻՄՄԴ) 7-րդ հոդվածներով նախատեսվում է, որ «ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:¹⁹ ԶԶԻՄՄԴ 9-րդ հոդվածը նույնպես ամրագրում է, որ ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով: Բացի այդ, բոլոր, այդ թվում ԼԳԲՏԻ անձանց արժանապատվությունը, պետք է պաշտպանվի միշտ և բոլոր հանգամանքներում՝ ինչպես նշված է ԶԶԻՄՄԴ հոդված 10 (1)-ում:²⁰

Մարդու իրավունքների միջազգային իրավունքն ընդհանուր պաշտպանություն է նախատեսում՝ հիմնված մարդու իրավունքների հիմնարար սկզբունքի՝ խտրականության բացառման վրա: ԶԶԻՄՄԴ-ի 26-րդ հոդվածը սահմանում է, որ «բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք: Այդ

առնչությամբ որևէ կարգի խտրականություն պետք է արգելվի օրենքով, և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից, անկախ ռասսայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային վիճակից, ծննդի կամ այլ հանգամանքից»: Մարդու իրավունքների ոլորտում համաձայնագրերը թեև անմիջականորեն չեն նշում սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, խտրականության հատկանիշների թվարկումը, որպես կանոն, սպառնիչ չեն և ներառում են «այլ հանգամանքներ» ձևակերպումը, որը պետք է մեկնաբանել որպես խտրականություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով:²¹

Վերջերս վերանայված «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները» (Նելսոն Մանդելայի կանոններ)²² անմիջականորեն ԼԳԲՏԻ ազատությունից զրկված անձանց համար ուղեկիշներ չեն ներառում, սակայն վերահաստատում են «ցանկացած այլ կարգավիճակի» անձանց խտրականության բացառման սկզբունքը և 2-րդ կանոնով բանտի վարչակազմին պարտավորեցնում են հաշվի առնել բանտարկյալների, մասնավորապես, առավել խոցելի խմբերի անհատական կարիքները՝ հավելելով, որ հատուկ կարիքներով բանտարկյալների իրավունքները պաշտպանելուն ու իրացնելուն ուղղված միջոցներն անհրաժեշտություն են և չպետք է դիտարկվեն որպես խտրականություն:

Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն ընդգծել է, որ «հավասարության սկզբունքը և ոչ խտրական վերաբերմունքը ենթադրում են ոչ միայն որոշակի վերաբերմունքի արգելում, եթե այն կամայական է..., այլև ողջամտության սահմաններում տարբերակված միջոցների սահմանման պարտավորություն, որոնք հիմնավորված, անհրաժեշտ և համաչափ են մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում»:²³

Բողոքներ ներկայացնելու հնարավորությունը, այդ թվում նաև իրավախորհրդատուի կամ ընտանիքի անդամի միջոցով (վերանայված նվազագույն ստանդարտ կանոններ, կանոն 56), և «հաշվեհարդարի, ահաբեկման կամ խնդրագրի կամ բողոքելու հետևանքով որևէ այլ բացասական հետևանքների ռիսկի» կանխարգելման երաշխիքները (կանոն 57) հատուկ կարևորություն ունեն ԼԳԲՏԻ ազատությունից զրկված անձանց համար:

ԼԳԲՏԻ անձանց հատուկ պաշտպանության անբավարարության և միջազգային հանրության կողմից պառակտված և անհետևողական արձագանքին ի պատասխան, 2006 թվականի Նոյեմբերին բարձր մակարդակով

հանդիպում է կազմակերպվել Ինդոնեզիայի Ջոկյակարտա քաղաքում, որտեղ հավաքվել էին մարդու իրավունքների ոլորտի տարբեր վայրերից ժամանած ու մշակույթ կրող փորձագետներ, այդ թվում՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով նախկին գերագույն հանձնակատարը, **ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգեր** ունեցող մասնագիտացած մարմինների ներկայացուցիչներ, պայմանագրային մարմինների անդամներ, դատավորներ, գիտնականներ, հասարակական կազմակերպություններ և այլք: Վերջնական փաստաթուղթը՝ Ջոկյակարտայի սկզբունքները, սահմանում է մարդու իրավունքների մի շարք միջազգային սկզբունքներ՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության համատեքստում: Դրանցից որոշները վերաբերում են քրեական արդարադատության համակարգում ԼԳԲՏԻ անձանց իրավունքներին, որոնց թվում են կամայական ազատազրկումից պաշտպանության (սկզբունք 7), արդար դատաքննության (սկզբունք 8), անազատության պայմաններում մարդասիրական վերաբերմունքի (սկզբունք 9) իրավունքները, ինչպես նաև խոշտանգումներից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ մնալու իրավունքը (սկզբունք 10):

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի հարցերով հատուկ զեկուցողի մանդատի հաջորդ կրողները Նույնպես կարևոր դերակատարություն ունեցան ազատությունից զրկված սեռական փոքրամասնությունների և նրանց՝ դաժան վերաբերմունքից ու բռնություններից պաշտպանելու անհրաժեշտության խնդիրներին ուշադրություն հրավիրելու գործում: 2001 թվականի հուլիսի 3-ին Զատուկ զեկուցողը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային ուղղված իր միջանկյալ զեկույցում առանձին բաժին է հատկացրել սեռական փոքրամասնությունների նկատմամբ խոշտանգումների ու խտրականության խնդիրին: Նա ընդգծել է նրանց առանձնակի խոցելիությունը խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի առջև, այդ թվում՝ բողոքելու կարգի ու բժշկական խնամքի սահմանափակ հասանելիությունը, հանցագործության կասկածանքով ձերբակալման կամ բողոք ներկայացնելու ժամանակ ոստիկանության կողմից հետապնդումներն ու բռնությունը և ազատությունից զրկելու վայրերում պահման պայմանները, որոնք կարող են ստեղծել բանտարկյալների դե-ֆակտո ենթադաս: ²⁵

Համապատասխան փոփոխություններ են արձանագրվել ինչպես տարածաշրջանային մակարդակում, այնպես էլ տարածաշրջանային մարդու իրավունքների դատարանների նախադեպային իրավունքում:

2010 թվականին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն առաջարկություններ է մշակել անդամ պետությունների համար՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի մեթոդների վերաբերյալ: 4-րդ առաջարկությունը միտված է «քրեակատարողական հիմնարկներում գտնվող կամ այլ ձևով ազատությունից զրկված բոլոր անձանց, այդ թվում՝ լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսսեքսուալ անձանց, պաշտպանությունն ապահովելուն, մասնավորապես, ինչպես մյուս դատապարտյալների, այնպես էլ վարչակազմի ծառայողների կողմից ֆիզիկական բռնության, բռնաբարության և սեռական բռնության այլ ձևերից պաշտպանության ապահովման համար միջոցների ձեռնարկմանը: Այդ միջոցները պետք է և՛ պատշաճ պաշտպանեն, և հարգեն տրանսսեքսուալ անձանց գենդերային ինքնությունը:»²⁶

2013 թվականի հունիսի 24-ին Եվրոպական Միության (ԵՄ) խորհուրդն ընդունել է «Ուղեցույց՝ խթանելու և պաշտպանելու լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսսեքս և ինտերսեքս (ԼԳԲՏԻ) անձանց կողմից մարդու բոլոր իրավունքների իրացումը», որը նախատեսում է նաև ազատությունից զրկելու հետ կապված իրավիճակներ: Ուղեցույցը, ի թիվս այլնի, հրավիրում է ԵՄ մարմինների պաշտոնյաներին և ԵՄ անդամ պետություններին «կապ հաստատել երկրի դատախազության, ոստիկանության ղեկավարների կամ անկախ մշտադիտարկում իրականացնող մարմինների հետ՝ ազատությունից զրկելու վայրեր այցելության թույլատվության և, օրինակ, ԼԳԲՏԻ անձանց իրավիճակը գնահատելու համար» և առաջարկում է «մշտադիտարկում իրականացնող միջազգային մարմիններին ազատությունից զրկելու վայրեր այցելությունների ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել ԼԳԲՏԻ անձանց»:

Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը, որը ԼԳԲՏԻ անձանց հարցերով հատուկ խումբ է ստեղծել, իր զեկուցողների խմբերի միջոցով պարբերաբար բարձրացնում է ԼԳԲՏԻ անձանց, այդ թվում՝ ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության հարցը: Օրինակ՝ աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների հարցերով զեկուցողն իր մտահոգությունն ու հիասթափությունն է հայտնել ԱՄՆ Միգրացիոն ծառայության ազատությունից զրկելու վայրերում մենախցերի կիրառման կապակցությամբ: «Իբրև թե երաշխավորելու ազատությունից զրկված խոցելի ներգաղթյալների, այդ թվում՝ Նույնասեռականների և տրանսգենդեր անձանց

անձնական անվտանգությունը»:

ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԿԻՃԱԿՆԵՐԸ

Քրեական արդարադատության հետ առնչվելիս՝ սեռական փոքրամասնությունները բախվում են բազմաթիվ տարատեսակ իրավիճակների և ռիսկերի:²⁹ Թեև ոստիկանության կողմից ազատությունից զրկվող բոլոր անձինք բախվում են խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի ռիսկին³⁰, որն առավել մեծ է ազատությունից զրկելու առաջին փուլում, ԼԳԲՏԻ անձինք էլ ավելի խոցելի են և ավելի շատ են ենթարկվում վատ վերաբերմունքի, և դա պայմանավորված չէ այն հանգամանքով, թե նույնասեռականությունը քրեականացված է, թե՛ ոչ (չնայած՝ առաջին դեպքում ռիսկերն ավելանում են): Կան կամայական ձեռքարկությունների, հետապնդումների, ֆիզիկական և հոգեբանական բռնության, խոստովանություն կորզելու, խցակիցների և օրինապահ մարմինների ծառայողների կողմից բռնաբարության դեպքերի մասին փաստագրված տվյալներ:

խոշտանգումների հարցով հատուկ զեկուցողը նշել է, որ «սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը հաճախ հանգեցնում է զոհի՝ մարդկային հատկանիշների կորստի, որն էլ հաճախ անհրաժեշտ պայման է խոշտանգումների ու վատ վերաբերմունքի համար»:³¹

Հաջորդ գլխում, թեև ներկայացված չէ ռիսկերի ամբողջական ցուցակը, այնուամենայնիվ փորձ է արվում ուրվագծել առավել ռիսկային գործոնները՝ կապված ոստիկանությունում և քրեակատարողական համակարգում ազատությունից զրկելու հետ:

1. ՁԵՐԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱԼԱՆՔ

Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ձեռքարկությունները հաճախ են հանդիպում նաև որոշակի համատեքստում, օրինակ՝ ոստիկանությունների ստորաբաժանումներում, որտեղ իշխում են հոմոֆոբ և տրանսֆոբ տրամադրություններ, որտեղ պետական այրերի կողմից խտրականությունը մնում է անպատիժ: Ոստիկանությունը նման երկրներում հաճախ է ձեռքարկում ԼԳԲՏԻ անձանց՝ այլ քաղաքացիների բողոքների հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ, մինչդեռ հազվադեպ է օգնություն ցուցաբերում իրենց կարգավիճակի հիմքով բռնության զոհ դարձած

կամ իրենց նկատմամբ հանցագործության վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացրած ԼԳԲՏԻ անձանց:

Օրինակ՝ Ուկրաինայի վերաբերյալ պարբերաբար հաղորդագրություններ են շրջանառվում ոստիկանության կողմից ԼԳԲՏԻ անձանց իրավունքների ոտնահարման, այդ թվում՝ ապօրինի ձեռքարկությունների, շորթումների, սեռական կողմնորոշումը և անձնական կյանքին վերաբերող այլ տեղեկությունները բացահայտելու սպառնալիքների, իրավական պաշտպանություն տրամադրելը մերժելու, ջրից ու սննդից զրկելու, ազատությունից զրկելու վայրերում ֆիզիկական բռնության մասին:³²

Համաձայն տրանսգենդեր կանանց նկատմամբ բռնությունների և անպատժելիության վերաբերյալ Լատինական Ամերիկայի³³ իրավապահների զեկույցի՝ տրանսգենդեր անձանց իրավունքները պաշտպանող հարցված ակտիվիստների 95 տոկոսը հայտնել է, որ տուժել են ոստիկանության ամենաթողությունից ինչպես փողոցում, այնպես էլ ոստիկանական մեքենաներում կամ ստորաբաժանումներում:

ԱՄՆ-ում նույնպես գրանցվել են ոստիկանների կողմից սեքսուալ ծառայությունների ոլորտում աշխատող տրանսգենդեր անձանց վիրավորելու դեպքեր, որոնք երբեմն դրսևորվում էին հազուադեպ բռնի պատռելու կամ կեղծամը պոկելու ձևով: Նրանք ավելի հաճախ են ենթարկվում խուզարկության և հարցաքննության՝ ոստիկանության ծառայողների կամայականության պատճառով: Որոշ երկրներում անձի մոտ մի քանի պահպանակի հայտնաբերումն օգտագործվում է դատարանում որպես բավարար ապացույց մարմնավաճառության դեմ պայքարի շրջանակներում անձի հետապնդման համար: Արդյունքում սեքսուալ ծառայությունների ոլորտում աշխատող տրանսգենդերները և այլոք, փորձելով խուսափել պահպանակի համար ձեռքարկվելուց, ենթարկվում են ՄԻԱՎ վարակման ավելի բարձր ռիսկի: Լիբանանում արձանագրվել են իրավապահ մարմինների կողմից մարդու արժանապատվությունը նվաստացնող դեպքեր, ընդհուպ մինչև, երբ ձեռքարկվածը կարծել է, թե ավազակային հարձակման է ենթարկվել, քանի որ ոստիկանները չէին ներկայացել: Նրան բերման են ենթարկել ոստիկանական բաժանմունք ու ստիպել մերկանալ և այդպես կթանալներ անել:³⁵

Թիրախավորված բռնությունը հաճախ խորապես արմատավորված է ինստիտուցիոնալ մշակույթում, ինչը հանգեցնում է սեռական

փոքրամասնությունների հանդեպ կարծրատիպային և արհամարհական վերաբերմունքի³⁶: Օրինակ՝ Նեպալում տրանսսեքսուալները, որոնք հայտի են որպես «մետիսներ», պատմականորեն ամենաշատ խտրականության ենթարկված խումբն են, նրանց հանդեպ դաժան վերաբերմունքի, բռնության ու կամայական ձերբակալման դեպքերը պատշաճորեն փաստագրված են: 2011 թվականին Գերագույն դատարանը վճռեց, որ Նեպալը անտեսում է «երրորդ սեռի» անձանց և LQFSH համայնքի ներկայացուցիչների իրավունքները: Կառավարությանը հրահանգվեց միջոցներ ձեռնարկել նշված խմբի պաշտպանության համար, ներառյալ՝ հատուկ օրենսդրության ընդունումը, որը կբացառեր խտրականությունը, և որպես հետևանք, իրավապահ մարմինների կողմից մետիսների հանդեպ բռնության դեպքերը կրճատվեցին 98 տոկոսով:³⁷

Այն երկրներում, որտեղ գործում են նույնասեռականության դեմ օրենքներ, ոստիկանները ենթադրում են, որ չարաշահումները կարող են անպատիժ մնալ: Տանգանիայում, որտեղ տղամարդկանց միջև կամավոր սեռական հարաբերությունները պատժվում են 30 տարուց մինչև ցմահ ազատազրկմամբ, «*Յոունս Բայթս Վոտչ*» կազմակերպությունն իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից նույնասեռական և տրանսգենդեր անձանց նկատմամբ սեռական բռնության, ինչպես նաև ձերբակալության ժամանակ այլ դաժան վերաբերմունքի բազմաթիվ դեպքեր է արձանագրել:³⁸

Բացի այն, որ նույնասեռական անձինք ենթարկվում են խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի, մեծ հավանականությամբ, նրանք ենթարկվում են նաև արարողակարգային երաշխիքների բազմաթիվ խախտումների, ինչպիսիք են ձերբակալության սահմանված ժամանակից ավել անազատության պայմաններում պահելը, փաստաբան չտրամադրելը, ընտանիքի անդամների հետ կապ հաստատելը մերժելը և այլն:³⁹

Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է լավ տեղեկացված լինեն ձերբակալման և կալանավորման վերաբերյալ օրենքներին, կարգավորումներին և ընթացակարգերին և պետք է ստուգեն, թե արդյոք դրանք պահպանվել են LQFSH կալանավորված անձանց դեպքում:

Քիչ հավանական է, որ մշտադիտարկում իրականացնողներն ականատես լինեն ձերբակալությանը, սակայն ձերբակալված անձանց հետ զրույցների ընթացքում կարող են գնահատել՝ արդյոք ձերբակալումը կատարվել է խտրական հիմքով, թե՛ ոչ, արդյոք անհամաչափ ուժ է կիրառվել, արդյոք օգտագործվել են ձերբակալության արգելված կամ խտրական միջոցներ:

Ձերբակալության հանգամանքները, մասնավորապես՝ վայրը (օրինակ՝ հաստատություններ ու հանրային տարածքներ, որտեղ սովորաբար լինում են սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները, ոստիկանական ստուգայցերը (ռեյդերը)), ձերբակալմանը մասնակցող ոստիկանների քանակը և ժամը (օրինակ՝ ուշ գիշեր), դիմելաձևը, խոսելաճոճը և այլն, կարող են LQFSH բնակչության նկատմամբ ոստիկանական վերաբերմունքն արտացոլող ցուցանիշներ լինել:

«Ոչ ոք չպետք է ենթարկվի կամայական ձերբակալության կամ ազատազրկման: Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ձերբակալությունը կամ ազատազրկումը կամայական են, անկախ նրանից՝ դա դատարանի որոշմամբ է կատարվել, թե այլ կերպ: Բոլոր ձերբակալված անձինք՝ անկախ իրենց սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից, իրավունք ունեն, հավասար հիմունքներով, տեղեկացված լինելու ձերբակալման պատճառների ու իր դեմ առկա բոլոր մեղադրանքների մասին, առանց հապաղման բերվելու համապատասխան դատական ծառայողի մոտ, պահանջելու սկսել դատական վարույթ՝ քննելու ձերբակալման օրինականությունը՝ անկախ որևէ հանցագործության մեջ մեղադրանքի առկայությունից կամ բացակայությունից»:

Չոկյակարտյան սկզբունքներ: Սկզբունք 7 «Կամայական ազատությունից զրկելուց պաշտպանության իրավունք»

2. ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես ձերբակալությունը, այնպես էլ հարցաքննությունը LQFSH անձանց համար հատուկ ռիսկային փուլ է՝ պայմանավորված չարաշահումներով և դաժան վերաբերմունքով: Անվտանգության երաշխավորման միջոցառումները ներառում են հարցաքննության անցկացման հստակ ընթացակարգեր՝ ձայնագրում (ցանկալի է՝ տեսագրում), բոլոր ներկաների անուններով գրավոր հաշվետվության առկայություն, ինչպես նաև փաստաբանի ներկայություն:

Սեռական փոքրամասնությունները բախվում են ավելի մեծ ռիսկի հետ, քանի որ առկա են լրացուցիչ սպառնալիքներ, որոնք կարող են կիրառվել իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից՝ խոստովանական ցուցմունք կորզելու նպատակով: Օրինակ՝ ոստիկանության ծառայողները կարող են սպառնալ բացահայտել ձերբակալված անձի սեռական կողմնորոշումն ընտանիքի անդամներին, ընկերներին կամ գործընկերներին կամ անգամ կարող են տրանսգենդեր անձին կեղծ պատրվակով ձերբակալել և ազատության դիմաց գումար կամ սեռական ծառայություններ

պահանջել:⁴⁰ Ոստիկանության կողմից կաշառքն ու շորթումները կարող են ծառայել ոչ միայն խոստովանական ցուցմունք ստանալուն, այլև որպես ազատություն ստանալու միջոց:

Այն երկրներում, որտեղ նույնասեռականությունը քրեականացված է, ինքնախոստովանությունն պարտադրելու ռիսկն ավելի բարձր է, իսկ նման չարաշահումներից պաշտպանվելու համար դատարան դիմելու հնարավորությունը՝ խիստ սահմանափակ: Օրինակ՝ Կամերունում, որտեղ նույնասեռականների դեմ դատավարությունների մեծամասնությունը հիմնված է ինքնախոստովանական ցուցմունքների վրա, իրավապահ մարմինների աշխատակիցները հակված են դիմելու խոշտանգումների և դաժան վերաբերմունքի՝ պահանջվող «ապացույցները» ստանալու նպատակով:⁴¹ Արձանագրվել են դեպքեր, երբ իրավապահ մարմինների աշխատակիցները մահակներով ծեծել են մարդկանց, պարտադրել են մերկ քնել հատակին, սպառնացել են սպանել և տեսագրել բջջային հեռախոսներով:⁴²

Մշտադիտարկում իրականացնող անձինք ազատությունից զրկվածների հետ մասնավոր զրույցների ընթացքում կարող են տեղեկություն ստանալ այն մասին, թե ինչպես են անցկացվել հարցաքննությունները, արդյոք կիրառվել է ֆիզիկական բռնություն կամ այլ դաժան վերաբերմունք: Առհասարակ, իրավապահ մարմինների աշխատակիցների ընդհանուր վերաբերմունքն ու շփման ոճը առանցքային նշանակության ցուցիչներ են, որոնք բնորոշում են ԼԳԲՏԻ անձանց հանդեպ վերաբերմունքը: Գրանցամատյաններից, մասնավորապես, միջադեպերի մասին արձանագրություններից ու բժշկական փաստաթղթերից ստացված տեղեկությունները կարող են օգտակար լինել ցանկացած հավաքագրված տվյալների խաչաձև ստուգման համար:

3. ԱՆԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՏԵՂԱԲԱՇԽԵՒՄԸ

Տրանսգենդեր ազատագրվածների տեղաբաշխումն ազատությունից զրկելու վայրեր, իսկ այնուհետև խցեր, պետք է կատարվի մեծագույն զգուշավորությամբ, իսկ ազատությունից զրկված անձից պետք է տեղեկանալ՝ նրանք ցանկանում են զտնվել տղամարդկանց թե՞ կանանց համար նախատեսված հիմնարկում:⁴³ Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն առաջարկություն է ներկայացրել՝ նախքան տրանսգենդեր անձին տեղաբաշխելը ազատությունից զրկելու վայրեր, անհրաժեշտ է հաշվի առնել նրա կարիքները: Տեղաբաշխման և ազատագրվման ընթացքում նրանց պաշտպանության մասին որոշումները պետք է կատարվեն նրանց տեղեկացված համաձայնությամբ:

Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ վերանայված

կանոնների 7(ա) կանոնը սահմանում է, որ հիմնարկ ընդունվելիս՝ յուրաքանչյուր ազատությունից զրկված անձի անձնական գործում ավելացվում է տեղեկություն նրա ինքնության մասին՝ հարգելով անձի՝ իր սեռի ինքնաընկալումը: Սա կարող է ծառայել որպես միջոց՝ դյուրացնելու ազատությունից զրկված տրանսգենդեր անձանց տեղաբաշխումն իրենց ընտրությամբ՝ կանանց կամ տղամարդկանց համար նախատեսված հիմնարկներում:

2011 թվականին Կանանց նկատմամբ բռնության հարցերով հատուկ զեկուցողը նկարագրել է Սալվադորում տեղի ունեցած մի դեպք, երբ տրանսգենդեր կինը բնակեցվել էր տղամարդկանց համար նախատեսված բանտում՝ խմբավորման անդամների հետ նույն խցում, որտեղ նա ավելի քան 100 անգամ բռնաբարվել է, երբեմն հիմնարկի ծառայողների մասնակցությամբ:⁴⁴

Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն իր ութերորդ տարեկան զեկույցում մտահոգություն է հայտնել առ այն, որ «նույնականացման պատշաճ միջոցների բացակայության պատճառով գրանցումն ու ազատագրվումը որոշ դեպքերում հանգեցնում են տրանսգենդեր կանանց՝ տղամարդկանց համար նախատեսված հիմնարկում տեղաբաշխելուն, որտեղ նրանք բռնաբարության մեծ ռիսկի են ենթարկվում, հաճախ բանտի աշխատակիցների մասնակցությամբ»:⁴⁵

2011 թվականի մարտին Իլինոյս նահանգի Կուկ շրջանի բանտը, որն ԱՄՆ-ի ամենամեծ բանտերից է, նոր քաղաքականություն է ներդրել ազատությունից զրկված տրանսգենդեր անձանց համար: Գենդերային ինքնության հարցերով հանձնաժողովը պարբերաբար հանդիպումներ է անցկացնում՝ վերանայելու յուրաքանչյուր տրանսգենդեր ազատագրվածի համար կազմված ծրագիրը, այդ թվում՝ տղամարդկանց կամ կանանց հետ նրանց տեղաբաշխումը:⁴⁶ Այնուամենայնիվ, շատ երկրներում ազատությունից զրկված տրանսգենդեր անձինք տեղաբաշխվում են կենսաբանական կամ ծննդով տրված սեռի հիմքով:

Վերջերս Իսրայելի գերագույն դատարանի⁴⁷ նախադեպային որոշման մեջ անդրադարձ է կատարվել ազատությունից զրկված տրանսգենդեր անձանց հատուկ խոցելիությանը: Չաշվի առնելով այն փաստը, որ տրանսգենդեր անձը, ով 15 ամսվա ազատագրվման էր դատապարտված գողության համար, մյուս ազատագրվածներից պաշտպանելու նկատառումներից ելնելով պետք է պահվեր մենախցում, դատարանը կրճատեց ազատագրվման ժամկետը մինչև 10 ամիս՝ հիմնավորելով, որ պահման արտասովոր խիստ պայմանները պատիժը մեղմացնող հանգամանք են համարվում: Դատավճիռը, պահման առանձնահատուկ ծանր պայմաններով պայմանավորված, մեղադրյալի նկատմամբ

գթասիրտ վերաբերմունքի նախապադեպ ստեղծեց:

4. ԱՆՁՆԱԿԱՆ ՉՆՆՈՒՄ

ԼԳԲՏԻ անձինք առանձնահատուկ զգայունություն ունեն անձնական զննման նկատմամբ, հատկապես, եթե կալանավորված անձն ակնհայտ լեսբուհի, գեյ կամ բիսեքսուալ է կամ տրանսվեստիտ է կամ փոխել է սեռը/ գտնվում է սեռափոխության փուլում: Չննումը կարող է մեծացնել նվաստացման, դաժան վերաբերմունքի ու խտրականության ենթարկվելու ռիսկը, քանի որ կարող է առաջանալ մերկանալու ու ֆիզիկական շոշափման անհրաժեշտություն: Ազատությունից զրկվելու վայրերի աշխատակիցները պետք է վերապատրաստվեն, սովորեն զննություն անցկացնելու հմտություններ, և խտրականության բացառումը պետք է լինի ամբողջ դասընթացի կենտրոնական թեմա: Անձնական զննության ընթացքում՝ ֆիզիկական բռնության և դաժանության բացակայության դեպքում անգամ մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է հետաքննեն՝ արդյոք ոստիկանության վերաբերմունքը, դիմելածն և խոսելածը հարգալից են, և ազատությունից զրկված անձը միտումնավոր չի նվաստացվում:

Անձնական զննման հստակ չափանիշներն առաջին անգամ սահմանվել են Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ վերանայված կանոններում (կանոններ 50-52): Դրանք ամրագրում են օրինականության, անհրաժեշտության ու համաչափության սկզբունքները, ինչպես նաև մերկացնելու և մարմնի խոռոչների զննման «ծայրահեղ անհրաժեշտության» սկզբունքը և խրախուսում համապատասխան այլընտրանքների մշակումն ու կիրառումը:

Կանոնները կոչ են անում հարգել խուզարկվող անձի արժանապատվությունը և անձեռնմխելիությունը և ապահովել, որպեսզի զննությունը չօգտագործվի ոտնձգությունների, նվաստացումների և ազատությունից զրկված անձի անձնական կյանքի անձեռնմխելիությունն անհարկի խախտելու համար: Դրանք նաև սահմանում են, որ հաշվետվողականության համար անհրաժեշտ է պահպանել զննման վերաբերյալ գրառումները, որոնցում պետք է ներկայացվեն զննման պատճառները, այն անցկացնող անձանց տվյալներն ու խուզարկության արդյունքները:⁴⁸

Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է գնահատեն՝ արդյո՞ք զննումն իրականացվել է խտրական ձևով (օրինակ՝ ԼԳԲՏԻ անձինք ավելի հաճախ են ենթարկվում զննման, քան մյուս ազատությունից զրկված անձինք) կամ որքանով են զննման մեթոդները տարբերվում՝ պայմանավորված զննման

ենթարկվող անձով:

Արգելվում է ազատությունից զրկված անձանց ամբողջովին մերկացնելը, ամբողջական մերկացմամբ զննումը պետք է իրականացվի երկու փուլով՝ մերկացնելով գոտկատեղից վերև, այնուհետև՝ գոտկատեղից ներքև:

Միջազգային չափանիշները պահանջում են, որ զննումն իրականացնեն ազատությունից զրկված անձի հետ նույն սեռի աշխատակիցները:⁴⁹ Այս չափանիշը թեև վերաբերելի է ազատությունից զրկված անձանց մեծամասնությանը, այն միշտ չէ, որ պաշտպանում է ԼԳԲՏԻ անձանց, քանի որ նրանք կարող են վիրավորանքների ու նվաստացման ենթարկվել նույն սեռի անձի կողմից զննման ժամանակ: Ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձանց, ովքեր բացահայտ կերպով նույնականացնում են իրենց որպես ԼԳԲՏԻ, պետք է, հնարավորության դեպքում, տրվի զննություն անցկացնողի սեռն ընտրելու իրավունք:

Երբեմն ազատությունից զրկված տրանսսեքսուալ անձինք կարող են ճիշտ չնույնականացվել և այդ պատճառով կարող են ենթարկվել արական սեռի անձի կողմից զննման, թեև իրենք նույնականացնում են իրենց որպես իգական սեռի ներկայացուցիչ (և հակառակը): Մշտադիտարկում իրականացնող մարմինները կարող են հիմնարկի ղեկավարությանը առաջարկել՝ մշակել ԼԳԲՏԻ անձանց զննման հատուկ ընթացակարգ⁵⁰: Ընթացակարգը պետք է ոչ միայն որոշի պատասխանատու աշխատակցի սեռը, այլև խթանի բոլոր աշխատակիցների նրբանկատությունը և նախատեսի պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ: Հարավային Աֆրիկայում Քեյփթաունի ոստիկանությունը՝ Gender Dynamix⁵¹ հասարակական կազմակերպության հետ համատեղ, որն աջակցություն, խորհրդատվություն և տեղեկատվություն է տրամադրում տրանսգենդեր անձանց, մշակել է ստանդարտ օպերացիոն ընթացակարգեր՝ երաշխավորելու օրենքի հետ խնդիրներ ունեցող տրանսգենդեր անձանց անվտանգությունը: Ընթացակարգերի հիմնական պահանջներից մեկը վերաբերում է զննման անցկացմանը և սահմանում է, որ եթե տրանսգենդեր անձը ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ, որտեղ նշվում է իր սեռը, ապա նա կարող է պահանջել, որպեսզի զննումն անցկացնի նույն սեռի ոստիկանության ծառայողի կողմից, անգամ եթե սեռափոխության վիրահատություն չի կատարվել:

Ֆրանսիայի՝ ազատությունից զրկվելու վայրերի գլխավոր տեսուչի խոսքերով. «[սեռափոխության] վիրահատության առաջին փուլերից անձնական զննումը պետք է հատուկ նրբանկատությամբ իրականացվի՝ երաշխավորելով հարգալից վերաբերմունք անձի արժանապատվության նկատմամբ: Այն դեպքերում, երբ սեռափոխության գործընթացի անդարձելիությունը հաստատվում

Է բազմադիրտ մասնագետների խմբի կողմից, զննումը պետք է անցկացվի ինչպես ազատությունից զրկված անձի, այնպես էլ աշխատակիցների արժանապատվությունը հարգելու պայմաններում, այն է՝ զննումը պետք է կատարվի անձի նոր սեռի հետ նույն սեռի աշխատակցի կողմից՝ առանց սպասելու անձի քաղաքացիական կարգավիճակի փոփոխությանը: Նման զննումները պետք է անցկացվեն պատշաճ կերպով իրազեկված և նախապատրաստված աշխատակիցների կողմից»:

5. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազատությունից զրկելը ծանր փորձություն է յուրաքանչյուր մարդու համար, սակայն ԼԳՖՏԻ անձանց մոտ ավելի բարձր է ազատությունից զրկված մյուս անձանց կողմից բռնության ենթարկվելու ռիսկը: Ինչպես արդարացիորեն նշել է Խոշտանգումների հարցով հատուկ զեկուցողը. «Ազատությունից զրկելու վայրերում, որպես կանոն, գործում է խիստ հիերարխիա, և հիերարխիայի ստորին սանդղակին գտնվողները, օրինակ՝ երեխաները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք և հիվանդները, գեյերը, լեսբուհիները, բիսեքսուալներն ու տրանսգենդեր անձինք ենթարկվում են կրկնակի կամ եռակի խտրականության»:⁵²

Սեռական բռնության ենթարկվելու ռիսկը, որպես ազատությունից զրկված անձանց միջև բռնության տեսակ, հատկապես բարձր է ԼԳՖՏԻ անձանց դեպքում: Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն, օրինակ, հաղորդում է, որ ստացել է «տեղեկություններ, ի թիվս այլնի՝ ծեծի, սեռական բռնության, ազատության սահմանափակման, լեսբուհիների այսպես կոչված «ուղղիչ» բռնաբարության մասին և տրանսգենդեր կնոջ կրծքավանդակին և այտոսկրերին կանխամտածված հարվածելու մասին՝ իմպլանտները պայթեցնելու ու տղքսիները դուրս բերելու նպատակով»:⁵³ ԱՄՆ վիճակագրական բյուրոյի տվյալներով՝ իրենց որպես հետերոսեքսուալ նույնասեռող տղամարդկանց 3,5 տոկոսը ենթարկվել է սեռական բռնության ազատությունից զրկված այլ անձանց կողմից՝ համեմատած 34 տոկոս բիսեքսուալ և 39 տոկոս նույնասեռական տղամարդկանց հետ:⁵⁴ Խցակիցների կողմից սեռական բռնության կանխարգելման համար անհրաժեշտ է անցկացնել ազատությունից զրկված բոլոր անձանց գնահատում՝ պարզելու, թե արդյոք նրանք կարող են զոհ դառնալ կամ վտանգ ներկայացնում են, արդյոք, այլոց համար:

Ազատությունից զրկված անձանց ու աշխատակազմի վերաբերմունքը, սեռով պայմանավորված, կարող է զգալիորեն տարբերվել: Օրինակ՝ *ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի* (ԹՉՊԳ) և *ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ԶԻԱԶ-ի*

հարցերի համատեղ ծրագրի (ՄԱԶԻԱՅ) կողմից Կոստա Ռիկայում անցկացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կանանց բանտերում, որտեղ ձևավորվում են լեսբի զույգեր, սեռական բազմազանությունն ավելի տեսանելի է, այն հանդուրժվում է (թեև չի ընդունվում ղեկավարության կողմից), իսկ գենդերային ինքնությունն ավելի քիչ է կասկածի տակ դրվում: Տղամարդկանց համար նախատեսված հաստատություններում գեյ զույգեր գրեթե չեն ձևավորվում (բացառությամբ որոշ դեպքերի, երբ ազատությունից զրկված տրանսգենդեր անձը հարաբերության մեջ է լինում ազատությունից զրկված արական սեռի ներկայացուցչի հետ), իսկ ազատությունից զրկված անձանց մեծամասնությունը համարում է, որ նույնասեռական հարաբերությունները կասկածի տակ են դնում իրենց առնականությունը: Նման իրավիճակում հոմոֆոբիան և տրանսֆոբիան, ի համեմատություն արտաքին աշխարհի, աճում են, և սեռական հարաբերությունները հաճախ ուղեկցվում են բռնությամբ:⁵⁵

Լայնորեն տարածված է ԼԳՖՏԻ անձանց կամ իրենց սեռական փոքրամասնությունն համարող անձանց մեկ խցում պահելը: Նման դեպքերում այդ խցերը կարող են ավելի վատթար վիճակում լինել, քան նույն հիմնարկի մյուս խցերը: Երբեմն ազատությունից զրկված ԼԳՖՏԻ անձինք պահվում են հիերարխիայի ներքևում գտնվող այլ անձանց խցում, հաճախ՝ ենթադրաբար պաշտպանական նկատառումով: Օրինակ՝ ՅՈՒՆԵՍԿՈՒՄԻ մայրաքաղաք Տեգուսիգալպայի բանտում «բանտի մերժվածները» պահվում են ԼԳՖՏԻ անձանց հետ նույն միավորումներում, որոնք նախատեսված են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար:

Հաշվի առնելով բռնության մասին ղեկավարությանը հայտնելու դեպքում հաշվեհարդարի սպառնալիքը՝ ազատությունից զրկված անձանց պետք է, հիմնարկներում սեռական բռնության մասին բողոք ներկայացնելիս, գաղտնիության երաշխիքներ տրամադրվեն՝ բողոքների քննման ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործընթացներում: Սեռական բռնության զոհ դարձած ազատությունից զրկված անձինք պետք է ժամանակին բժշկական օգնություն և խորհրդատվություն ստանան:

6. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ԶԱՐԱՇԱՅՈՒՄՆԵՐԸ

Խոշտանգումներն ու այլ դաժան վերաբերմունքը բացարձակապես արգելված են և ոչ մի դեպքում չեն կարող արդարացվել՝ ներառյալ ազատությունից զրկված անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքը: Այդուհանդերձ արձանագրվել են դեպքեր, երբ ազատությունից զրկված ԼԳՖՏԻ անձինք ենթարկվել են ֆիզիկական բռնության,

բռնաբարության կամ այլ սադիստական վերաբերմունքի ու վիրավորանքների ազատությունից զրկելու վայրի անձնակազմի կողմից: Օրինակ՝ ԱՄՆ բանտերում, սեռական բնույթի բռնությունների գրեթե կեսը կատարվում են ծառայողների, այլ ոչ թե բանտակիցների կողմից:⁵⁶

Կոստա Ռիկայում ԹՀԳ-ն ու ՄԱԶԻԱՀ-ը նկատել են, որ նույնասեռականությունը բանտի որոշ միավորումներում ֆիզիկապես պատժվում է, որոշներում՝ ոչ, և եզրակացրել, որ ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ բռնությունները պայմանավորված են քրեակատարողական հիմնարկի անձնակազմի վերաբերմունքով:⁵⁷ Այս փաստը վկայում է, որ, երբ բռնության նման դրսևորումները խստորեն չեն դատապարտվում բանտային ղեկավարության և վերադաս մարմինների կողմից, ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձինք հայտնվում են տվյալ միավորը վերահսկող անձնակազմի բարի կամքի իշխանության ներքո:

ԱՄՆ-ի կանանց բանտում (Վիրջինիա նահանգի Ֆլուվանսա ուղղիչ կենտրոն) լեսբի կանայք և տղամարդու տեսք ունեցող ազատազրկածները, ըստ ստացված տեղեկությունների, պահվում էին այսպես կոչված «լեսբուհիների թևում», որտեղ նրանց ստորացնում և խարանում էին:⁵⁸

Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է գնահատեն, թե արդյոք ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձինք ենթարկվում են բռնության կամ խտրականության բանտի աշխատակազմի կողմից: Մշտադիտարկում իրականացնողները պետք է ստուգեն նաև՝ արդյոք առկա է խտրական վերաբերմունքը դատապարտող ներքին կանոնակարգ և բողոքների գաղտնիությունն ապահովող անկախ համակարգ: Այնտեղ, որտեղ նման քաղաքականություն գոյություն չունի, մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է նման առաջարկությամբ հանդես գան:

Կարող է օգտակար լինել նաև առաջարկվող ուսուցողական ծրագրերի, այդ թվում անընդհատ վերապատրաստման ծրագրերի վերլուծությունը՝ հասկանալու համար՝ արդյոք նման ծրագրերը ներառում են քրեակատարողական հիմնարկների անձնակազմի իրազեկվածության բարձրացում՝ խտրականության անթույլատրելիության և, մասնավորապես, ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձանց և նրանց կարիքների համատեքստում:

7. ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄՆ ՈՒ ՄԵՆԱԽՈՒՑԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Ազատությունից զրկված անձանց պաշտպանությունը ազատությունից զրկված մյուս անձանցից ազատությունից զրկող մարմինների անմիջական պարտականությունն է: Ինչպես արդեն նշվել է, խցակիցների կողմից բռնության, այդ թվում բռնաբարության,

«Պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ օրենսդրական, վարչական և այլ միջոցները՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման և տուժածների պաշտպանության, ինչպես նաև նման գործողություններ հրահրելը բացառելու ուղղությամբ:

Պետք է իրականացնեն ուսուցողական և իրազեկվածությունը բարձրացնող ծրագրեր ոստիկանության, բանտային անձնակազմի և հանրային կամ մասնավոր ոլորտի բոլոր այն պաշտոնակատար անձանց համար, ովքեր ի պաշտոնե նման խախտում գործելու կամ կանխարգելելու հնարավորություն ունենա:

Ձուկակարտյան սկզբունքներ. սկզբունք 10. «խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունք»:

Ֆիզիկական ու հոգեկան բռնության ռիսկը բարձր է ազատությունից զրկված սեռական փոքրամասնության ներկայացուցիչների համար: Ազատությունից զրկող մարմինները պետք է տարատեսակ ռազմավարություններ մշակեն այդ ռիսկերը նվազեցնելու համար: Դրանք կարող են ներառել ազատությունից զրկված անձանց դասակարգումն ըստ կատեգորիաների, մի խցում ապրող ազատությունից զրկված անձանց մանրակրկիտ ընտրություն, հետապնդումների դեմ պայքարի հանրայնացում և բողոքների ներկայացման գաղտնիությունն ապահովող համակարգ: Ազատությունից զրկող մարմինները չարաշահում են մեկուսացումը որպես բռնությունից պաշտպանելու միջոց կիրառումը՝ մոռանալով միջանձնային շփման և գործունեության պակասը լրացնելու անհրաժեշտության մասին:

խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողը նշում է, որ «լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձինք հաճախ են ենթարկվում մեկուսի պահման՝ «պաշտպանական նկատառումներով»:⁵⁹ Թեև նման անձանց առանձնացումը կարող է անհրաժեշտ լինել նրանց անվտանգության համատեքստում, լեսբի, գեյ, բիսեքսուալ կամ տրանսգենդեր կարգավիճակը չի արդարացնում նրանց սոցիալական ռեժիմի, օրինակ՝ հանգստի հնարավորության, ընթերցանության նյութերի, իրավական և բժշկական խորհրդատվության սահմանափակումները: Բացի այդ, երկարատև մեկուսացումը կարող է հավասարեցվել դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կամ

անգամ խոշտանգման:⁶⁰

Չաշվի առնելով երկարաժամկետ մեկուսացման բացասական հետևանքները՝ մասնավորապես երկարացվող կամ անորոշ ժամկետով, մենախցերի օգտագործումն արդարացված է միայն բացառիկ հանգամանքներում՝ հնարավորին ամենակարճ ժամկետով և պատշաճ ընթացակարգային երաշխիքներով: Նվազագույն ստանդարտ վերանայված կանոններն առաջին անգամ ներառում են հստակ սահմանափակումներ, որոնք պահանջում են, որ «հիմնարկի ընդհանուր բնակչությունից բռնի առանձնացումը, ներառյալ կամֆին հակառակ ցանկացած ձևի առանձնացումը, դրա վերանայումը կամ դրա վերացումը կարգավորող բոլոր քաղաքականությունները և ընթացակարգերը» արտոնված լինեն օրենքով կամ կանոնակարգով (կանոն 37):

Կանոնները մեկուսի ազատագրվումը սահմանում են որպես «ազատությունից զրկում՝ առանց օրվա ընթացքում 22 կամ ավելի ժամ մարդկային իմաստային շփման», և արգելում են դրա անժամկետ կամ երկարատև (ավելի քան 15 օր) կիրառումը (կանոններ 43 և 44): Այս բացարձակ արգելից բացի, Կանոնները հստակեցնում են, որ «մեկուսի պահելը պետք է կիրառվի միայն բացառիկ դեպքերում՝ որպես վերջին միջոց, հնարավորին ամենակարճ ժամկետով, ենթակա լինի անկախ վերանայման և միայն իրավասու մարմնի թույլտվությամբ» (կանոն 45(1)): Ավելին, Կանոնները պահանջում են միջոցներ ձեռնարկել ազատությունից զրկված անձանց մեկուսացման հնարավոր բացասական հետևանքների ազդեցությունը մեղմելու համար (կանոն 38(2)):

Թեև խոցելի իրավիճակում հայտնված ազատությունից զրկված անձանց մեկուսացնելը պաշտպանության նկատառումներով կարող է արդարացված լինել, այն պետք է կիրառվի բացառապես ազատությունից զրկված անձի համաձայնությամբ, հստակ ընթացակարգով և չպետք է հանգեցնի հետագա խարանձան կամ կրթության ու ծառայությունների հասանելիության սահմանափակումների: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում ազատությունից զրկված նույնասեռական անձը ստացել էր ազատությունից զրկված խոցելի անձի կարգավիճակ (ԽԱ)՝ մյուս ազատագրվածների կողմից չարաշահումների հիմքով և տեղափոխվել էր խոցելի անձանց բաժանմունք: Սակայն, ստանալով ԽԱ կարգավիճակ՝ նա կորցրեց իր աշխատանքը հիմնարկի կրթական ստորաբաժանումում՝ նրան թույլատրվում էր մասնակցել միայն տարրական կրթության մեկ առավոտյան դասաժամի, իսկ մնացած ժամանակը նա անցկացնում էր խցում:⁶¹

Մեկուսացումը՝ որպես պաշտպանական միջոց, կիրառվել է Թուրքիայում ԼԳԲՏԻ անձանց համար, ինչը փաստացիորեն զրկել է նրանց հիմնարկի միջոցառումների

մասնակցելու հնարավորությունից:⁶² Մարդու իրավունքների եվրոպական դատարանը⁶³ վճռեց, որ այդ պրակտիկան Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի, ինչպես նաև խտրականության մասին 14-րդ հոդվածի խախտում է: Չայցվորը՝ Թուրքիայի քաղաքացին, որը պահվում էր մենախցում՝ անվտանգության նկատառումներով, դիմել էր բանտի ղեկավարությանը՝ խնդրելով առանձնացնել իրեն իր խցակիցներից, քանի որ նրանք սպառնում էին իրեն և ծաղրում սեռական կողմնորոշման համար: Նա տեղափոխվել էր առանձին խուց՝ 7 մետր քառակուսի մակերեսով և պահվել այդ խցում ավելի քան 13 ամիս առանց բացօթյա մարզումների և ազատությունից զրկված մյուս անձանց հետ շփման: Այդ որոշումն ակնհայտորեն ցույց է տալիս ԼԳԲՏԻ անձանց մենախցերում պահելու պրակտիկայի՝ որպես նրանց պաշտպանության ամենաոլորտին միջոցի խնդրահարուց լինելը:

Սեռափոխության փուլում գտնվող ազատությունից զրկված տրանսգենդեր անձինք նույնպես չպետք է մեքենայաբար տեղաբաշխվեն մենախցերում: Ինչպես նշել է ազատագրված անձների Ֆրանսիայի տեսուչը.

«Բժշկական միջամտության ամբողջ ընթացքում քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունը պետք է երաշխավորի անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը: Սա չի նշանակում, որ անձը պարտադիր պետք է տեղափոխվի մենախուց և նրա պաշտպանությունը ճնշումների և ծաղրանքների ցանկացած դրսևորումներից՝ իր մտադրության համատեքստում (այն է՝ սեռափոխություն): Առանձին խուց ազատությունից զրկված անձին պետք է հատկացվի իր ցանկությամբ և պահանջով:»⁶⁵

Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է գնահատեն ազատությունից զրկելու վայրերում խոցելի անձանց պաշտպանության միջոցների և ազատությունից զրկված անձին մյուսներից անջատման/ մեկուսացման պայմանների ու ձևերի միջև հավասարակշռության պահպանումը: Չատուկ նշանակություն ունի գնահատականն առ այն, թե որքանով են ազատությունից զրկված անձինք համաձայն՝ գտնվելու նման «պաշտպանական ռեժիմի» ներքո, և, թե արդյոք այն չի օգտագործվում որպես առանձին անձանց ճնշելու կամ պատժելու միջոց: Այն հիմնարկներում, որտեղ կիրառվում է ազատությունից զրկված մյուս անձանցից մեկուսացումը, անհրաժեշտ է երաշխավորել, որ բանտային ռեժիմը ապահովի այլ անձանց հետ նշանակալից սոցիալական շփումների հնարավորություն, օրինակ՝ ավելացնելով աշխատակիցների և ազատությունից զրկված անձանց շփումը, ապահովելով

ազատությունից զրկված մյուս անձանց հետ սոցիալական ակտիվության հասանելիությունը, ավելացնելով այցելությունների թիվը, կազմակերպելով հանդիպումներ հոգեբանների, հոգեբույժների, հոգևորականների և տեղի բնակիչներից կամավորների հետ, խթանելով և ամրապնդելով ընտանիքի և ընկերների հետ հարաբերությունները և ապահովելով խցում ու խցից դուրս իմաստավորված գործունեությամբ զբաղվելու հնարավորություն:⁶⁶

«Պետությունները պետք է հնարավորինս ապահովեն ազատությունից զրկված բոլոր անձանց մասնակցությունը ազատությունից զրկելու վայրի ընտրությանը, որը կհամապատասխանի իրենց սեռական կողմնորոշմանն ու գենդերային ինքնությանը: Պետք է երաշխավորեն պաշտպանական միջոցներ ազատությունից զրկված բոլոր անձանց համար, ովքեր խոցելի են բռնության ենթարկվելու կամ անթույլատրելի վերաբերմունքի արժանանալու համատեքստում՝ իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով, ինչպես նաև պետք է ապահովեն, որ այդ միջոցները չուղեկցվեն ազատությունից զրկված այս խմբի անձանց իրավունքների ավելի լայն սահմանափակումներով, քան ազատությունից զրկված մյուս անձանց համար գոյություն ունեցող սահմանափակումները»:

Ցույակարտյան սկզբունքներ. սկզբունք 9 (Գ-Դ). «Անազատության պայմաններում մարդասիրական վերաբերմունքի իրավունք»

8. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Բժշկական օգնությունը և իմաստային գործունեությունը բխում է մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներից, և ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձինք պետք է ազատությունից զրկված այլ անձանց հետ հավասար հասանելիություն ունենան դրանց: Այնտեղ, որտեղ կրթության, մասնագիտական վերապատրաստման, սեմինարների, սպորտային միջոցառումների հնարավորություն կա, հիմնարկի ղեկավարությունը կարող է սահմանափակել ազատությունից զրկված անձանց համար դրանց հասանելիությունը՝ անվտանգության կամ (անհրաժեշտ և համաչափ) կարգապահական նկատառումներով: Սակայն նման միջոցառումների հասանելիության սահմանափակումը կամ դադարեցումը երբեք չպետք է խտրական բնույթ կրի:

Սեռական փոքրամասնությունները հաճախ զրկվում են այդ միջոցառումներին մասնակցելու հնարավորությունից՝ խտրականության հիմքով կամ պաշտպանության նկատառումներից ելնելով, ազատությունից զրկված մյուս անձանցից մեկուսացվելու պատճառով:

Մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է գնահատեն՝ արդյո՞ք ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձինք զրկված են ծառայությունների կամ միջոցառումների հասանելիությունից իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով: Եթե բացահայտվում է ծառայությունների հասանելիության նման հիմքով սահմանափակում, ապա մշտադիտարկում իրականացնողները պետք է ճշտեն՝ արդյո՞ք դա արվել է ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձի համաձայնությամբ, քանի որ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով պատիժը հեշտությամբ կարող է ներկայացվել որպես «պաշտպանական» միջոց:

Եթե ամուսինների հետ տեսակցությունները թույլատրված են միայն ազատությունից զրկված հետերոսեքսուալ անձանց, ապա մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է առաջարկություններ ներկայացնեն առ այն, որ այս հնարավորությունը հավասար հիմունքներով հասանելի լինի ազատությունից զրկված բոլոր անձանց՝ խտրականության բացառման սկզբունքով: 2011թ. հոկտեմբերին Կոստա Ռիկայի Գերագույն դատարանը վճիռ կայացրեց քրեակատարողական համակարգում խտրական օրենքների դեմ բողոք ներկայացրած ազատությունից զրկված անձի օգտին: Այդ օրենքները սահմանում էին, որ «մտերմիկ հանդիպումները» թույլատրվում են բացառապես հակառակ սեռի անձանց հետ: Այժմ Կոստա Ռիկայում ազատությունից զրկված նույնասեռականները, հետերոսեքսուալների հետ հավասար հիմունքներով, «մտերմիկ հանդիպումների» իրավունք ունեն:⁶⁷

«Պետությունները պետք է երաշխավորեն, որ ամուսինների հետ հանդիպումները, եթե այդպիսիք թույլատրված են, տրամադրվեն բոլոր դատապարտյալներին ու կալանավորված անձանց՝ անկախ նրանց գուզընկերոջ սեռից»:

Ցույակարտյան սկզբունքներ. սկզբունք 9 «Անազատության պայմաններում մարդասիրական վերաբերմունքի իրավունք»

Ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձանց կարող են մերժել համապատասխան բժշկական օգնություն տրամադրել: Նրանք անգամ կարող են բախվել առողջապահական ոլորտի մասնագետների վատ վերաբերմունքի:

Մարդու իրավունքների միջազգային մարմինները զեկուցում են բանավոր ճշումների ու հանրային ստորագումների, հոգեբուժական գնահատումների, ստերջացման և հորմոնալ թերապիայի մասին, ինչպես նաև նույնասեռականության մեջ կասկածվող տղամարդկանց, առանց իրենց համաձայնության, նույնասեռականությունն ապացուցելու համար անալ հետազոտությունների ենթարկելու մասին: Խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեն, Խոշտանգումների դեմ կոմիտեն, Խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողը և Կամայական ազատագրվման հարցերով աշխատանքային խումբը խստորեն դատապարտում են նման բժշկական հետազոտությունները:⁶⁸

Հատկանշական է, որ բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ վերանայված կանոնները վերահաստատում են հիվանդի իրավունքները և բժշկական էթիկայի սկզբունքները, որոնց թվում են ազատությունից զրկված անձի ինքնուրույն և տեղեկացված համաձայնության իրավունքը (կանոն 32): Ավելին, 25-րդ կանոնը կարևորում է բուժանձնակազմի դերակատարությունը ազատությունից զրկված անձանց ֆիզիկական և հոգեկան առողջության գնահատման, պահպանման և բարելավման հարցում:

Քրեակատարողական հիմնարկի ղեկավարությունը պետք է երաշխավորի բժշկական օգնության հիմնական ձևերի հասանելիությունը, սակայն հատուկ խնամքի խնդիրը, ինչպես, օրինակ, ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձանց բժշկական սպասարկումն է, ավելի հակասական է: ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչները, ովքեր սեռական բռնության զոհ են դարձել, հնարավոր է ստանան բռնության հետևանքով ստացված տրավմայի անբավարար բուժում կամ ընդհանրապես բուժում չստանան, էլ չենք խոսում հոգեբանական աջակցության և հոգեկան առողջության պահպանման մասին,

որոնք անհրաժեշտություն են սեռական բռնության դեպքում: Քրեակատարողական հիմնարկի առողջապահական ծառայությունը պետք է հոգեբանական խորհրդատվություններ տրամադրի սեռական բռնության կամ բռնաբարության արդյունքում տուժած անձանց՝ հոգեկան առողջության վերականգնման հարցերով: Բացի այդ, ազատությունից զրկված բոլոր անձանց պետք է հասանելի լինի սեռավարակների, այդ թվում ՄԻԱՎ-ի կոնֆիդենցիալ բուժումը՝ առանց որևէ խտրականության:⁶⁹

Տրանսգենդեր անձանց պետք է, ազատությունից զրկված մյուս անձանց հետ հավասար հիմունքներով, հասանելի լինի հոգեբանական աջակցությունը: Ինչ վերաբերում է հորմոնալ թերապիային և/կամ վիրաբուժական միջամտությանը, համաձայն բժշկական օգնության համարժեքության սկզբունքի, տրամադրվող բուժումը պետք է լինի այնպիսին, ինչպիսին հասանելի է ազատության պայմաններում⁷⁰: Հիմնարկի ղեկավարությունը պետք է երաշխավորի, որ բուժումը չընդհատվի անձի ազատությունից զրկելու կամ ազատվելու պատճառով:

Ինչպես նշել է ազատությունից զրկելու վայրերի Ֆրանսիայի գլխավոր տեսուչը. «Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ, ով նույնացնում է իրեն այլ սեռի հետ, պետք է այդ գործընթացում ուղղորդվելու հնարավորություն ստանա և քրեակատարողական հիմնարկի բժշկական ծառայության խնամքի տակ վերցվի...: Բուժման

ամբողջ ընթացքում անձն, անհրաժեշտության դեպքում, պետք է քրեակատարողական հիմնարկում հոգեբանական օգնություն ստանա»:⁷¹

ԱՄՆ-ում Մասաչուսեթսի նահանգային դատարանը վճռել է, որ առանց վաղաժամկետ ազատման

իրավունքի ցմահ դատապարտյալը պետք է սեռափոխության վիրահատություն անցնելու հնարավորություն ստանա՝ որպես իր գենդերային ինքնության խանգարման միակ հնարավոր բուժում:⁷²

ռիսկերը, որոնց կարող են բախվել այս կամ այն խմբի ներկայացուցիչները»:⁷³ Ցանկում ազատությունից զրկված ԼԳՏԻ անձանց ներառումը հստակ ուղերձ կլինի իշխանություններին և հանրության լայն շրջանակներին:

ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՆԵԼ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Մշտադիտարկում իրականացնող մարմինները, ազատությունից զրկման վայրերում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության և դաժան վերաբերմունքի խնդիրները թիրախավորելիս, պետք է հաշվի առնեն մի շարք նկատառումներ՝ սկսած մշտադիտարկող թիմի կազմից, ռազմավարությունից և անգամ օրենսդրական կարգավորումներից մինչև սեռական փոքրամասնությունների իրավիճակի վերաբերյալ գիտելիքների ձևավորումն ու մշտադիտարկման մեթոդաբանության հարմարեցումն այդ համատեքստին:

Առանցքային նշանակություն ունի մշտադիտարկող մարմնի ներսում հստակ և միանշանակ վերաբերմունքի առկայությունը սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականության անթույլատրելիության վերաբերյալ: Եթե միասնական մոտեցումը բացակայում է, մշտադիտարկում իրականացնող անձինք չեն կարողանալու արդյունավետ ու հավաստիորեն զբաղվել սեռական փոքրամասնությունների պաշտպանության հարցերով:

1. ԻՐԱԿԱՎԱՆ ՅԵՆԸ

Այն երկրներում, որտեղ մշտադիտարկում իրականացնող մարմինների ստեղծումը և նրանց լիազորություններն ամրագրված են օրենսդրությամբ, հնարավորություն կա բարձրաձայնելու և տեսանելի դարձնելու ԼԳՏԻ անձանց առջև ծառայած խնդիրները: Եթե կան խմբեր, որոնք օրենքով թվարկված են որպես խոցելի, ապա ԼԳՏԻ անձինք Նույնպես պետք է ներառվեն այդ ցանկում: Յոնդոնացիները կանխարգելման ազգային մեխանիզմներ ստեղծելու օրինագծում հստակ նշված է, որ կանխարգելման ազգային մեխանիզմի աշխատակիցները, ի թիվս այլ գործառնությունների, պարտավորվում են «բացահայտել խոցելի խմբերը, ինչպիսիք են [...] ԼԳՏԻ համայնքը և այլք, հայտնաբերել

2. ԿԱՁՄԸ

Մշտադիտարկում իրականացնող մարմինների կազմը և անդամակցությունն ազատությունից զրկելու վայրերի վերահսկողության արդյունավետության հիմնական բաղադրիչներն են: Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության 18-րդ հոդվածը սահմանում է. «Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ապահովեն կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների՝ պահանջվող ունակություններն ու մասնագիտական գիտելիքները: Նրանք պետք է ապահովեն գենդերային հավասարակշռություն և երկրում առկա էթնիկ և փոքրամասնությունների խմբերի համարժեք ներկայացվածությունը»: Նման սկզբունքները պետք է հնարավորինս կիրառվեն նաև մյուս փոքրամասնությունների նկատմամբ: Այսպիսով, մշտադիտարկում իրականացնող մարմինները կարող են ներդնել ինստիտուցիոնալ քաղաքականություն, որը կխրախուսի ներգրավել փոքրամասնության և խոցելի խմբերի, այդ թվում՝ ԼԳՏԻ համայնքի ներկայացուցիչներին՝ որպես աշխատակիցներ, փորձագետներ, պատվավոր անդամներ:

3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Մշտադիտարկում իրականացնող որոշ մարմիններ, ինչպիսիք են, օրինակ, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ազգային հաստատությունները կամ օմբուդսմենները, մշակել են քաղաքականություններ, որոնք խստիվ արգելում են փոքրամասնությունների, ներառյալ՝ սեռական փոքրամասնությունների նկատմամբ խտրականությունը:⁷⁴ Ոմանք ակտիվորեն հանդես են գալիս սեռական և գենդերային փոքրամասնությունների մարդու իրավունքների պաշտպանության օգտին: Նման մոտեցումը թույլ է տալիս մշտադիտարկում իրականացնող մարմիններին հստակ հայտարարել սեռական փոքրամասնությունների նկատմամբ խտրականության անթույլատրելիության մասին: Օրինակ՝ Նոր Չեխիայի մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովը մշակել է «Ազատ ու հավասար ծնվածները» հայեցակարգը, որը միաժամանակ կոչ է հասարակությանը: Հայեցակարգի հիմքում Ջոնյակարտյան սկզբունքներն են, և այն սահմանում է, որ «բոլոր մարդիկ, անկախ իրենց

սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից, օժտված են մարդու հավասար իրավունքներով և ազատություններով: Նոր Չեխնդիայում բոլոր սեռական և գենդերային փոքրամասնություններն ունեն այդ իրավունքները, անկախ այն եզրույթից, որը նրանք օգտագործում են իրենց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը նկարագրելու համար: Մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովը ճանաչում և գնահատում է ինքնությունների և համայնքների այս բազմազանությունը և ընդունում է այդ բազմազանությունը որոշակի շրջանակներում պարփակելու բարդությունները»:⁷⁵

4. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԼԳԲՏԻ ազատությունից զրկված անձանց խնդիրների և ռիսկերի հետևողական և մասնագիտական լուծման նպատակով մշտադիտարկում իրականացնող մարմինների անդամները պետք է հատուկ պատրաստվածություն ունենան, իսկ անհրաժեշտության դեպքում՝ վերապատրաստվեն: Նման վերապատրաստումը կարող է ներառել դիտարկվող խմբերի մասին գիտելիքների ձեռքբերում՝ դասակարգումների տարբերակում, հատկապես սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության տարբերությունների ընկալում, ինչպես նաև ազատությունից զրկելու հանգամանքով պայմանավորված կարիքների, ռիսկերի ու չափանիշների իմացություն:

Կարող է օգտակար լինել նաև գոյություն ունեցող պրակտիկաների համեմատությունը՝ ինչպես դրական (օրինակ՝ ԼԳԲՏԻ ազատությունից զրկվածների խմբերի գոյությունը կամ խորհրդատվական ժողովները ազատագրված վայրերում), այնպես էլ խտրական: 2012 թվականին Միացյալ Թագավորության բանտային տեսչության (Միացյալ Թագավորության կանխարգելման ազգային մեխանիզմներից մեկը) տեսուչները մասնակցել են ԼԳԲՏԻ ազատագրվածների հարցերով սեմինարի՝ ուղղված ազատությունից զրկելու վայրերում դիտարկման ընթացքում բացահայտված ԼԳԲՏԻ խնդիրների վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացմանը: Մասնակիցները փոքր խմբերով քննարկել են մի քանի սցենարներ՝ միտված հայտնաբերելու ԼԳԲՏԻ ազատությունից զրկված անձանց հիմնական խնդիրները և բարելավելու նրանց իրավիճակը: Սցենարները հիմնված են եղել բանտային ստուգումների վերջին զեկույցների և գեյ նախկին ազատագրվածների անձնական փորձի վրա, որոնք օգնում էին աշխատանքային խմբերի հանդիպումների օրակարգը մշակելու հարցում:⁷⁶

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձանց պաշտպանությունը երաշխավորելու համար

մշտադիտարկում իրականացնող մարմինների ռազմավարությունն ու աշխատանքային մեթոդները հանգամանալից մշակման կարիք ունեն: Կարևոր է գրավել հիմնարկի ղեկավարության ուշադրությունը, սակայն հաշվի առնել, որ դրա հետևանքով կարող է աճել բռնաճնշումների, բռնության, հետագա ավելի խարանման կամ պատիժների ռիսկը:

Ինչ վերաբերում է այցելություններին, հարց է առաջանում, թե արդյոք մշտադիտարկում իրականացնող մարմինները պետք է ակտիվորեն փորձեն հանդիպել և զրուցել ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձանց հետ:

Մշտադիտարկում իրականացնող մարմինները, հարցազրույցների համար ազատությունից զրկված անձանց ընտրելիս, պետք է առաջնորդվեն «մի վնասիր» սկզբունքով⁷⁷: Մի դեպքում կարող է նպատակահարմար լինել ազատությունից զրկելու վայրի պատասխանատուին դիմելը՝ ազատությունից զրկված ԼԳԲՏԻ անձի հետ հարցազրույց անցկացնելու խնդրանքով, մեկ այլ դեպքում դա կարող է հանգեցնել նրանց նկատմամբ դաժան վերաբերմունքի կամ նվաստացումների էլ ավելի մեծ ռիսկի:

ԼԳԲՏԻ անձի հետ հարցազրույցի ժամանակ մշտադիտարկում իրականացնող անձը պետք է նրբանկատություն ցուցաբերի անձի ընտրության և առանձնագրույցի վարման ձևի հարցերում:

Որոշ երկրներում հավաստի վիճակագրություն կա ԼԳԲՏԻ անձանց քանակի մասին, իսկ որոշ երկրներում նման տեղեկատվությունը կարող է բացակայել կամ ոչ վստահելի միջոցներով հավաքագրված լինել:

Այն դեպքում, երբ հիմնարկի վարչակազմը պատրաստակամ է տեղեկատվություն տրամադրել ԼԳԲՏԻ անձանց վերաբերյալ, մշտադիտարկում իրականացնող անձինք պետք է զգուշավորություն ցուցաբերեն՝ այդ տեղեկություններն օգտագործելիս և վերլուծելիս:

Տեղեկությունների հավաքագրման մեթոդաբանությունը (հարցաթերթիկներ, անձնական դիտարկումներ, կարիքների գնահատում), ինչպես նաև նման տվյալների հավաքագրման նպատակները պետք է հանգամանորեն հետազոտվեն, քանի որ դրանց հավաքագրումն ու օգտագործումը կարող են նաև խտրականության նպատակների ծառայել:

Առանձնագրույցների ընթացքում մշտադիտարկում իրականացնող անձը պետք է նրբանկատություն դրսևորի և երաշխավորի, որ հարցադրումները նկարագրողական պատասխան ենթադրեն և չլինեն ուղղորդող, քանի որ ազատությունից զրկվածները միշտ չէ, որ ցանկանում են բացահայտել

իրենց պատկանելիությունը սեռական
փոքրամասնությանը:

Ամեն անգամ, երբ ազատագրվածը պատմում
է իր հանդեպ սեռական կողմնորոշման
կամ գենդերային ինքնության հիմքով
կատարված ցանկացած տիպի բռնության կամ
խտրականության մասին, մշտադիտարկում
իրականացնողը պետք է ստանա նրա՝ բողոքը
դեկլարությանը փոխանցելու վերաբերյալ
տեղեկացված համաձայնությունը, ինչպես նաև
զգուշություն ցուցաբերի՝ այդ տեղեկությունն
այցելության վերաբերյալ զեկույցում
արտացոլելիս:

Մշտադիտարկում իրականացնող մարմինները,
իրենց այցելություններով և իշխանություններին
առաջարկություններ ներկայացնելով, կարող
են, մյուս ինստիտուտների և սուբյեկտների
հետ համատեղ, իրենց ներդրումն ունենալ
ազատությունից զրկելու վայրերում
սեռական փոքրամասնություններին
խոշտանգումներից, դաժան վերաբերմունքից և
այլ չարաչափումներից ու խտրականությունից
պաշտպանելու հարցում:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 'Culture, Religion, Tradition Can Never Justify Denial of Rights, Secretary-General Stresses in Message to Conference on Sexual Orientation, Gender Identity', UN Department of Public Information, 15 April 2013. Available at: www.un.org/News/Press/docs/2013/sgsm14944.doc.htm <accessed 7 October 2013>.
2. ԼԳԲՏԻ հապավումը բացվում է հետևյալ կերպ՝ Գեյ, Լեզբիան, Տրանսգենդեր և Ինտերսեքս: Սեռական փոքրամասնություններն այս փաստաթղթում օգտագործվում է որպես ԼԳԲՏԻ հոմանիշ:
3. Հետերոնորմալությունը ենթադրում է, որ հետորոսեքսուալությունը Նորմա է և պնդում է, որ սեռական և ամուսնական հարաբերությունները ընդունելի են միայն տղամարդու և կնոջ միջև: See Warner, Michael, *Fear of a Queer Planet: Queer Politics and Social Theory*, University of Minnesota Press, 1993.
4. UN Human Rights Council, Report of the United Nations High Commissioner for Human Rights: Discriminatory laws and practices and acts of violence against individuals based on their sexual orientation and gender identity, 17 November 2011, A/HRC/19/41.
5. Joint NHRI statement to the UN Human Rights Council on discriminatory laws and practices and acts of violence against individuals based on their sexual orientation and gender identity, 10 June 2013. Available at: <https://www.humanrights.gov.au/joint-nhri-statement-human-rights-council-sexualorientation-and-gender-identity> <accessed 7 October 2013>.
6. Signatories include: Manfred Nowak (Austria), former UN Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment; Mary Robinson (Ireland), former United Nations High Commissioner for Human Rights; Martin Scheinin (Finland), UN Special Rapporteur on human rights and counter-terrorism and other eminent experts from all regions. For a complete list see: www.yogyakartaprinciples.org/principles_en.htm
7. www.yogyakartaprinciples.org
8. Այս ուսումնասիրությունն անդրադառնում է միայն քրեական արդարադատության ոլորտում ԼԳԲՏԻ անձանց առնչվող ռիսկային իրավիճակներին: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ ուսումնասիրության շրջանակներում կատարված վերլուծությունը կարող է արտացոլել նաև այլ փակ հաստատություններում առկա իրավիճակը: For abuses towards LGBTI persons in other settings, see for example: Review of homophobic bullying in educational institutions, UNESCO, 12 March 2012; or people seeking asylum in immigration centres, in *Discrimination on grounds of sexual orientation and gender identity in Europe*, Council of Europe, 2d Edition, pp62-69, 2011. It is also worth mentioning the report of the Special Rapporteur on Torture on torture and ill-treatment in health-care settings, which includes a section about LGBTI persons, A/HRC/22/53, para76-79, 1 February 2013.
9. See Report of the Special Rapporteur to the UN General Assembly, 3 July 2001, A/56/156, para.23.
10. National Preventive Bodies (NPMs) are independent institutions established under the Optional Protocol to the United Nations Convention against Torture (OPCAT). Their mandate is to prevent torture and other ill-treatment in places of deprivation of liberty by inter alia regularly visiting places of detention and addressing recommendations to state authorities.
11. See for instance the Nevada state law criminalising consensual sex between same-sex teenagers, as a 'crime against nature'. Available at: <https://www.leg.state.nv.us/NRS/NRS-201.html#NRS201Sec195> <accessed 7 October 2013>.
12. Որոշ երկրներում հոմոսեքսուալության մեղադրանքով ձերբակալված տղամարդկանց ստիպում են անցնել բժշկական քննություն, որի նպատակն անալ սեքսի մասին ապացույցներ ձեռք բերելն է: Կամայական կալանքի ՄԱԿ-ի աշխատանքային խումբը համարում է, որ պարտադրված անալ զննումը հակասում է խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքին, անկախ այն հանգամանքից, թե զննումն իրականացվել է պատժելու, խոստովանություն կորզելու, թե հետագա խտրականության նպատակով: Ի հավելում, բժշկական տեսանկյունից՝ նշված միջոցը բացարձակապես անօգուտ է որոշելու համար, թե տվյալ անձն ունեցել է արդյոք միասեռական սեքսուալ հարաբերություններ, թե՛ ոչ: Working Group on Arbitrary Detention, Opinion No. 25/2009 on Egypt, A/HRC/16/47/Add.1, paras. 23, 28-29.
13. As of 2011, laws in at least 76 countries criminalised consensual relationships between adults of the same sex, with the death penalty an applicable sentence in at least five of them. See: Office of the High Commissioner for Human Rights, *Death penalty increasingly viewed as torture*, UN Special Rapporteur finds, 23 October 2012.
14. www.yogyakartaprinciples.org, p6.
15. www.yogyakartaprinciples.org, p6.
16. See, for example: www.intersex.ch.
17. Մեծ Բրիտանիայի կալանավայրերի տեսչության անցկացրած հարցումների համաձայն՝ կալանավորվածների մոտ 4%-ն իրեն համարում է ԼԳԲՏԻ, այն դեպքում, երբ ոստիկանական բաժանմունքներում գտնվող ձերբակալվածների միայն 0-2 %-ն է իրեն ԼԳԲՏԻ համարում: Այնուամենայնիվ, համարվում է, որ հավաքագրված տվյալները թերազնահատում են իրականությունը, քանի որ հարցվողների կարող են, մտահոգված լինելով հավաքագրվող տեղեկատվության իրենց դեմ օգտագործվելու հավանականությամբ, թաքցնել իրականությունը:
18. See Report of the Special Rapporteur to the UN General Assembly, 3 July 2001, A/56/156, para.19.
19. In its concluding observations to states, the United Nations Committee against Torture (CAT) raises its concerns regarding attacks or other abuse by members of the police, armed forces or prison staff against members of the LGBT community. See for example: Committee against Torture, *Concluding observations on the combined fifth and sixth periodic reports of Peru*, adopted by the Committee at its forty-nine session (29 October – 23 November 2012). Available at: http://reproductiverights.org/sites/crr.civicaactions.net/files/documents/crr_Peru_CAT_concluding_observations.pdf <accessed 7 October 2013>.
20. 'Բոլոր ազատությունից զրկված անձինքն պետք է արժանանան մարդկային վերաբերմունքի՝ պետք է հարգվի վերջիններիս արժանապատվությունը'
21. Committee against Torture, General Comment No. 2: Implementation of Article 2 by States Parties, paras.21-22; Committee on the Rights of the Child, General Comment No. 4: Adolescent Health, para. 6; Committee on Economic, Social and Cultural Rights, General Comment No. 20: Nondiscrimination in Economic, Social and Cultural Rights, paras.27, 32. See also jurisprudence of the European Court of Human Rights in relation to Article 14 of the European Convention on Human Rights, for example X v. Turkey (Application no. 24626/09), 9 October 2012.

22. The revised United Nations Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (the Nelson Mandela Rules), adopted by the UN Commission on Crime Prevention and Criminal Justice on 22 May 2015, endorsed by the Economic and Social Council on 9 September 2015, E/RES/2015/20 and adopted by UN General Assembly Third Committee on 5 November 2015, A/C.3/70/L.3. (At the time of printing this Resolution was pending adoption by the plenary of the UN General Assembly.)
23. Eighth annual report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 26 March 2015, para. 59.
24. See Report of the Special Rapporteur to the UN General Assembly, 3 July 2001, A/56/156, C. paras. 17-25.
25. The UNODC's Handbook on prisoners with special needs also includes a chapter dedicated to LGBTI prisoners. The Handbook outlines the issues faced by LGBTI persons in prison and recommends measures to address them, including on access to justice, complaints procedures, healthcare, detention conditions, protection needs and contact with family. It emphasises that '[t]he main and most important need of LGBT prisoners is protection from sexual abuse and rape, generally perpetrated by other prisoners': UNODC, Handbook on prisoners with special needs, 2009.
26. Recommendation CM/Rec(2010)5 adopted by the Committee of Ministers on 31 March 2010 at the 1081st meeting of the Ministers' Deputies. Available at: <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1606669>
27. Council of the European Union, Guidelines to promote and protect the enjoyment of all human rights by lesbian, gay, bisexual, transgender and intersex persons (LGBTI), Foreign Affairs Council Meeting, 24 June 2013.
28. See 'IACHR visits US immigration detention facilities', Inter-American Commission on Human Rights press release No. 53/09. Available at: www.cidh.org/Comunicados/English/2009/53-09eng.htm <accessed 7 October 2013>
29. Ռիսկեր կան նաև ազատություն ստանալուց հետո, քանի որ ԼԳԲՏԻ անձինք կարող են վախենալ հավանական խտրականության դրսևորումներից՝ համայնք վերադառնալիս, կարող են կորցրած լինել իրենց տունը կամ բացահայտել, որ այլևս չեն կարող վերադառնալ ընտանիք, քանի որ կայանավայրից բարեկամներին տեղեկացրել են վերջինիս ԼԳԲՏԻ լինելու մասին: Մեծ Բրիտանիայի կայանավայրերի տեսչության անցկացրած կայանավորվածների մասին հարցումների համաձայն՝ ԼԳԲՏԻ կայանավորվածների մոտ ավելի քարծր է ազատվելու և դրան անմիջապես հաջորդող շրջանին առնչվող անհանգստության մակարդակը, քան հետերոսեքսուալ կայանավորվածների մոտ:
30. See Monitoring police custody: a practical guide, Association for the Prevention of Torture, 2013.
31. Report of the Special Rapporteur on torture, 1 February 2013, A/HRC/22/53, para. 79.
32. See LGBT vector of Ukraine. The situation of LGBT in Ukraine (November 2011 – 2012), Council of LGBT Organisations of Ukraine, Nash Mir (Our World) Gay & Lesbian Centre, p21. Available at: www.gay.org.ua/publications/lgbt_ukraine_2012-e.pdf <accessed 7 October 2013>.
33. See The night is another country. Impunity and violence against transgender women human rights defenders in Latin America, Redactrans and International HIV/AIDS Alliance, 2012, p15.
34. Human Rights Watch, Sex workers at risk: condoms as evidence of prostitution in four US cities, 19 July 2012.
35. Human Rights Watch, 'It's part of the job': ill-treatment and torture of vulnerable groups in Lebanese police stations, 26 June 2013, p28.
36. See Institutional culture in detention: a framework for preventive monitoring, PRI/APT, 2nd edition, 2015, pp8-9.
37. Acco Blue Diamond Society (BDS), the leading organisation working on behalf of the LGBTI community in Nepal. See also An activist's guide to the Yogyakarta Principles, August, 2010, pp89-91. Available at: www.ypinaction.org/files/02/85/Activists_Guide_English_nov_14_2010.pdf <accessed 7 October 2013>.
38. Human Rights Watch, 'Treat us like human beings': discrimination against sex workers, sexual and gender minorities, and people who use drugs in Tanzania, 18 June 2013.
39. See Coupables par association. Violations des droits humains commises dans l'application de la loi contre l'homosexualité au Cameroun, pp48-51, Human Rights Watch, 2013.
40. Such cases were documented in Panama, Brazil and Guatemala, see The night is another country. Impunity and violence against transgender women human rights defenders in Latin America, Redactrans and International HIV/AIDS Alliance, 2012.
41. Coupables par association. Violations des droits humains commises dans l'application de la loi contre l'homosexualité au Cameroun, Human Rights Watch, 2013.
42. Ibid., pp44-45.
43. Subcommittee on the Prevention of Torture, during a presentation before the Inter-American Commission on Human Rights, 23 October 2015 (157 Period of Sessions, Situación de derechos humanos de las personas LGBT privadas de libertad en América Latina).
44. See A/HRC/17/26/Add.2, paras.28-29.
45. Eighth annual report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 26 March 2015, para. 68.
46. 'For Transgender Detainees, a Jail Policy Offers Some Security', New York Times, 22 December 2011. Available at: www.nytimes.com/2011/12/23/us/fortransgender-detainees-a-jail-policy-offers-some-security.html?pagewanted=all&r=0 <accessed 7 October 2013>.
47. See, for example, Principles and Best Practices on the Protection of Persons Deprived of Liberty in the Americas, Principle XXI; or the United Nations Rules for the Treatment of Women Prisoners and Non-custodial Measures for Women Offenders (the 'Bangkok Rules'), Rule 19.
48. For more information, see PRI/APT factsheet, 'Body Searches' in Detention Monitoring Tool, 2nd edition, 2015.
49. See, for example, Principles and Best Practices on the Protection of Persons Deprived of Liberty in the Americas, Principle XXI; or the United Nations Rules for the Treatment of Women Prisoners and Non-custodial Measures for Women Offenders (the 'Bangkok Rules'), Rule 19.
50. See, for example, the Correctional Service of Canada's Directive on searching inmates, which includes a protocol for searching transgender inmates (with the possibility of choosing between male and female officers carrying out the search, or a combination of both depending on the part of the body searched). Available at: <http://www.csc-scc.gc.ca/politiques-et-lois/566-7-cd-eng.shtml#s9> <accessed 20 November 2015>.
51. See Know your rights: changes to SAPS Standard Operating Procedures, 15 March 2013. Available at: <http://www.genderdynamix.org.za/know-yourrights-changes-to-saps-standard-operating-procedures/> <accessed 20 November 2015>.
52. Report of the Special Rapporteur on Torture to the UN Human Rights Council, Study on the phenomena of torture, cruel, inhuman or degrading treatment or punishment in the world, including an assessment of conditions of detention, 5 February 2010, A/HRC/13/39/Add.5, para.231.

53. Eighth annual report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 26 March 2015, para. 67.
54. Kaiser D and Stannow L, Prison rape: Obama's program to stop it, 11 October 2012.
55. UNAIDS/UNODC, Diversidad Sexual, Derechos Humanos y VIH en el Sistema Penitenciario de Costa Rica, 2012, pp42-45.
56. Kaiser D and Stannow L, Prison rape: Obama's program to stop it, 11 October 2012.
57. UNAIDS/UNODC, Diversidad Sexual, Derechos Humanos y VIH en el Sistema Penitenciario de Costa Rica, 2012, pp42-45.
58. Kaiser D and Stannow L, Prison rape: Obama's program to stop it, 11 October 2012.
59. Interim report of the Special Rapporteur on Torture to the UN General Assembly, 5 August 2011, A/66/268, p 19.
60. Ibid., p9.
61. 'Homophobia is still rife in UK prisons', The Guardian, 25 September 2012. Available at: www.guardian.co.uk/society/2012/sep/25/homophobia-rifeuk-prisons <accessed 7 October 2013>.
62. 'Majority of imprisoned LGBTs kept in solitary confinement', Hürriyet Daily News, 27 July 2013. Available at: www.hurriyetaidailynews.com/majority-of-imprisoned-lgbts-kept-in-jail-solitary-confinement.aspx?pageID=238&nlD=51500&NewsCatID=339 <accessed 7 October 2013>.
63. European Court of Human Rights, X v. Turkey (Application no. 24626/09), 9 October 2012.
64. 'No one shall be subjected to torture or to inhuman or degrading treatment.'
65. Contrôleur Général des lieux de privation de liberté, Avis du 30 juin 2010 relatif à la prise en charge des personnes transsexuelles incarcérées.
66. See Rule 38(2) of the revised Standard Minimum Rules for the Treatment of Prisoners, which calls on prison administrations to 'take the necessary measures to alleviate the potential detrimental effects' of prisoners who are, or have been separated.
67. See Acción de inconstitucionalidad contra el artículo 66 del Reglamento Técnico Penitenciario, Decreto Ejecutivo Número 33876-J, Exp: 08-002849-0007-CO, Res. No. 2011013800.
68. Eighth annual report of the Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment, 26 March 2015, para. 67 and 71.
69. UNODC, Handbook on prisoners with special needs, 2009, p 108.
70. See Rule 24(1), revised Standard Minimum Rules for the Treatment of Prisoners.
71. Contrôleur Général des lieux de privation de liberté, Avis du 30 juin 2010 relatif à la prise en charge des personnes transsexuelles incarcérées.
72. United States District Court, District Court of Massachusetts, Memorandum and order on eighth amendment claim, 4 September 2012. After this judgment was reversed by the First Circuit en banc court on 16 December 2014, the case is now pending at the Supreme Court following a petition for writ of certiorari (<http://www.glad.org/uploads/docs/cases/kosilek-v-spencer/cert-petition.pdf> (accessed 20 November 2015)).
73. La Gaceta, N°32,647, Honduras, 19 October 2011, Article 14.b.
74. See, for example, the Care Quality Commission's 'Equality and human rights' policy', which includes sexual orientation among the special needs to be considered by its inspectors. (The Care Quality Commission is one of the bodies constituting the UK NPM.) Available at: <http://www.cqc.org.uk/content/equality-and-human-rights> <accessed 20 November 2015>.
75. See Sexual orientation and gender identity, New Zealand Human Rights Commission. Available at: https://www.hrc.co.nz/files/1914/2388/0525/HRNZ_10_rights_of_sexual_and_gender_minorities.pdf <accessed 20 November 2015>.
76. See Dunn Peter, 'Slipping off the equalities agenda? Work with LGBT prisoners', in Prison Service Journal, March 2013, No.206, pp3-10.
77. «Մի՛ վնասիր սկզբունքը» գերակա սկզբունք է, որ պետք է կալանավայրերի իրականացվող բոլոր այցերի հիմքը հանդիսանա: Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիան իր «Կալանավայրերում մշտադիտարկման իրականացում» գործնական ուղեցույցում սահմանում է նշված սկզբունքը. «Կալանավորվածներն առանձնակի խոցելի են և նրանց անվտանգության նկատառումներից ելնելով՝ այցելումները չպետք է իրականացնեն որևէ գործողություն կամ ձեռնարկեն որևէ միջոց, որը կարող է վտանգի տակ դնել կալանավորված անհատի կամ խմբի: Մասնավորապես, խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի հավանական ռեպերում հարկավոր է մտքում պահել կոնֆիդենցիալություն, ապահովության և խոցելիության սկզբունքները: Վատ պլանավորված, նախապատրաստված կամ նշված սկզբունքներին և մեթոդաբանությանը չհամապատասխանող այցելությունները կարող են ավել շատ վնասել, քան օգտակար լինելը»: p29 of Monitoring places of detention: a practical guide, APT, 2004



association pour la prévention de la torture
 asociación para la prevención de la tortura
 association for the prevention of torture



ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ

ՌԻՍԿԵՐԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ
 ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ
 ԵՎ ԴԱԺԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՐԻ
 ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ



ՓԱՍՏԱԹՂԹԻ ՄԱՍԻՆ

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Միջազգային բանտային բարեփոխում» (PRI) կազմակերպության և «խոշտանգումների կանխարգելման ասոցիացիա»-ի (APT) կողմից մշակված «Ազատագրված վայրերի մշտադիտարկման գործիք»-ի մի մասը: Այն նպատակ ունի տրամադրել վերլուծություն և գործնական ուղեցույց՝ օգնելու մշտադիտարկում իրականացնող մարմիններին, այդ թվում Ազգային կանխարգելման մեխանիզմներին, ազատագրված վայրեր այցելություններ կատարելու ընթացքում իրենց կանխարգելման մանդատն առավել արդյունավետ օգտագործելու համար:

Գործիքն ուղղված է աջակցելու այդ մարմիններին՝ հայտնաբերելու և վերացնելու այն համակարգային ռիսկերը, որոնք նպաստում են այնպիսի միջավայրին, որտեղ կատարվում են խոշտանգումներ և առկա է դաժան վերաբերմունք: Այն ներառում է՝

թեմատիկ փաստաթղթեր. դրանցում ներկայացված են ավելի լայն թեմաների վերլուծություններ, որոնք կբարելավվեն մշտադիտարկման համապարփակ մոտեցման շնորհիվ, կանոնադրությունների և փորձի ուսումնասիրություններ քրեական արդարադատության գործընթացում՝ կենտրոնանալով գենդերային, սեռական կողմնորոշման կամ ինստիտուցիոնալ մշակույթի վրա,

տեղեկատվական նյութեր. դրանք տրամադրում են գործնական ուղեցույց, թե ինչպես մշտադիտարկման մարմինները կարող են կենտրոնանալ մի շարք համակարգային խնդիրների վրա, որոնք խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի համար բարձր ռիսկային գործոններ են, ինչպիսիք են անձնական խուզարկությունը կամ բանտի անձնակազմի աշխատանքային պայմանները:

Բոլոր ռեսուրսները կարող եք գտնել նաև օնլայն տարբերակով www.penalreform.org և www.apr.ch:



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԿ
CIVIL SOCIETY INSTITUTE NGO



Ministry of Foreign Affairs of the
Netherlands



Սույն հրապարակումը պատրաստվել է «Միջազգային բանտային բարեփոխում» կազմակերպության՝ «Խոշտանգումների և վատ վերաբերմունքի նվազեցումը Հայաստանում և Վրաստանում կանխարգելիչ մշտադիտարկման մեխանիզմների հզորացման միջոցով» ծրագրի շրջանակներում՝ Նիդերլանդների Արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ: Նյութի բովանդակության համար պատասխանատու է բացառապես հեղինակը, և այն որևէ ձևով չի արտահայտում ֆինանսավորող կողմի տեսակետները:

Penal Reform International

60–62 Commercial Street
London E1 6LT
United Kingdom

+44 (0) 20 7247 6515
www.penalreform.org
Twitter: @PenalReformInt

© Penal Reform International 2015

Association for the Prevention of Torture

PO Box 137
CH-1211 Geneva 19
Switzerland

www.ap.t.ch
Twitter: @apt-geneva

ISBN 978-1-909521-51-3